

Շնորհաւորական Ուղերձ Աժ Արտահերթ Ընտրութիւններուն Առիթով

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Կարգադրութիւնը կը շնորհաւորէ Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներուն, յաջորդական արդար, ազատ եւ թափանցիկ ընտրութիւններուն առիթով:

Ներքաղաքական գերշիկացած մթնոլորտի մէջ՝ հեզասահ ու անցնցում ընտրութիւններու կայացումը մեր ժողովուրդին համար մեծագոյն յաղթանակ է: Միաժամանակ, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման կարեւորագոյն ձեռքբերում է նաեւ այն իրողութիւնը, որ ամբողջ հանրապետութեան տարածքին տեղի ունեցաւ, թէկուզ թերի, բայց բուռն եւ իրական նախընտրական քարոզարշաւ, վաստակելու համար Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացիի քուէն:

Այս առթիւ, կը շնորհաւորենք վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ իր քաղաքական խումբին՝ ընտրութիւններուն իրենց արձանագրած տպաւորիչ յաղթանակին կայակցութեամբ եւ համոզուած ենք, որ վարչապետին տալով նորոգուած մանտաթ, ընտրողը յստակ պատգամ կ'ուղարկէ առ այն, որ մեր ռազմագերիներու տուն դարձի, ՀՀ ինքնիշխան տարածքէն ատրայէճանական զօրքերու դուրս բերման, Արցախի խնդրի մշտական եւ արդար լուծման, Հայաստանի հանրապետութեան անվտանգութեան եւ ապահովութեան ամրապնդման կողքին, ժողովրդավարութիւնը, օրէնքի գերակայութիւնը եւ կաշառակերութեան դէմ պայքարը կը մնան առաջնահերթութիւն եւ 2018 թուականին սկսած գործը պէտք է հասցնել աւարտին:

Միւս կողմէ, անընդունելի եւ դատապարտելի կը գտնենք որոշ քաղաքական գործիչներու եւ կարգ մը հոգեւորականներու կողմէ ընտրողներու հասցէին հնչող վիրաւորական արտայայտութիւններն ու պիտակաւորումները, որոնք միայն կը խորացնեն հասարակութեան բեւեռացումը, երբ այսօր միակ հրամայականը ներքին լարուածութեան լիցքաթափումը պէտք է ըլլայ: Այդ տեսանկիւնէն, կ'ողջունենք վարչապետի համախմբման ու երկխօսութեան կոչը եւ յոյս կը յայտնենք, որ այդ կ'ըլլայ առաջին քայլը՝ համերաշխութեան վերականգնման եւ միասնական ջանքերով հայրենիքի առջեւ ծառայած խնդիրներու լուծման:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Կարգադրութիւն
 23 Յունիս, 2021

Հայաստանի Ժողովուրդը Մերժեց Քոչարեանի Վերադարձը Փաշինեան Արձանագրեց Տպաւորիչ Յաղթանակ Միջազգային Դիտողները Դրական Գնահատեցին Ընտրութիւնները

Յունիսի 20-ին կայացած Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը ստանալով ձայներու 53,92 տոկոսը արձանագրեց համոզիչ յաղթանակ ու ստացաւ նոր մանտաթ՝ կառավարելու երկիրը յաջորդ հինգ տարիներուն:

Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած դաշինքը ստացաւ ձայներու 21,04 տոկոսը, իսկ Սերժ Սարգսեանի աջակից «Պատիւ Ունեմ» դաշինքը՝ 5,23 տոկոս:

Միայն այս երեք ուժերն են, որ ստացան բաւարար տոկոսներ յաջորդ խորհրդարանէն ներս ներկայացուած ըլլալու համար: Նոր խորհրդարանը պիտի ունենայ 107 պատգամաւոր՝ «Քաղաքացիական Պայմանագիր» 71 աթոռ, «Քոչարեան Դաշինք» 29 աթոռ, իսկ «Պատիւ Ունեմ» 7 աթոռ:

Նիկոլ Փաշինեանի յաղթանակը համոզիչ էր նաեւ այն առումով, որ այն առաւելութեան հասաւ Հայաստանի բոլոր մարզերուն եւ մայրաքաղաք՝ Երեւանի մէջ: Երջաններուն մէջ Փաշինեանի ստացած տոկոսները 50-60-ի միջեւ էին, սակայն Երեւանի մէջ 41 տոկոս:

Ընդհանուր առմամբ Հայաստանի ամբողջ տարածքին Փաշինեան ստացաւ 687251 ձայն, իսկ Քոչարեան՝ 268165 ձայն:

Նոր խորհրդարանէն ներս ներ-



Փաշինեան ելոյթ կ'ունենայ Յունիս 21-ի երեկոյեան կայացած յետընտրական հանրահաւաքի ընթացքին

կայացուած պիտի չըլլան Գագիկ Ծառուկեանի գլխաւորած «Բարգաւաճ Հայաստան» եւ Էստոն Մարուքեանի ղեկավարած «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնները, որոնք այս անգամ չկարողացան յաղթանակել 5 տոկոսի նուազագոյն շեմը:

Կէս գիշերէն ետք, երբ յայտնի էին արդէն ընտրութիւններու ընդհանուր պատկերը, Փաշինեան այցելեց «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան կեդրոնական շտապը, ուր ղեկավարուեցաւ իր զինակիցներուն կողմէ: Այս առթիւ իր ունեցած ելոյթի ընթացքին Փաշինեան ըսաւ, որ ար-

տահերթ խորհրդարանական ընտրութիւններուն յաղթած է Հայաստանի քաղաքացին եւ ժամանակն է վերականգնելու հանրային եւ ազգային միասնութիւնը:

«Արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդը խօսեց, եւ ժողովուրդը կայացրեց իր որոշումը, եւ այդ որոշման բովանդակութիւնը պարզ է. այն ձեւակերպուել էր դեռեւս նախընտրական քարոզարշաւի ժամանակ, բայց արձանագրենք, որ տեղի ունեցաւ այն, ինչը կանխատեսուած էր: Իսկ կանխատեսուած

Շար.ը էջ 5

Լոս Անճելըսի Մէջ Տեղի Ունեցաւ Հնչակեան Քսան Մարտիրոսներու 106-Ամեակի Ոգեկոչումը

1915 Յունիս 15-ին Պոլսոյ մէջ կախաղան բարձրացած Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քսան ղեկավարներու նահատակութեան 106-րդ տարելիցը պատշաճ շուքով նշուեցաւ Լոս Անճելըսի մէջ:

ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանի վարիչ Մարմինի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հանդիսութիւն, Հինգշաբթի, 17 Յունիս, 2021, Փաստօրինայի Հ.Կ.Մ.ի սրահին մէջ:

Նկատի ունենալով քորոնա ժահրի համաճարակի սամնափակումները՝ ընտրանի հասարակութիւն մը մասնակցեցաւ սոյն միջոցառումին: Ներկաներուն մէջ էին ԱՄՆ-ի Արեւմտեան թեմի բարեջան Առաջնորդ Գեորգ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գեորգ Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Սան Տիեկոյի նախկին հովիւ Արթ. Տ. Տաթեւ Ա. Քհնյ. եւ երէցկիւն Արաքսի Թաթուլեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոսարանի ներկայացուցիչ Էկտար Գրիգորեան, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան եւ վարիչ Մարմնի ան-



Ելոյթ կ'ունենայ ՍԴՀԿ Ատենապետ՝ Տոքթ. Համբիկ Սարաֆեան

դամներ, տարբեր կառույցներու եւ քոյր կազմակերպութեանց, մամուլի ներկայացուցիչներ ու ՄԴՀԿ-ի անդամներ եւ համակիրներ:

ԱՄՆ-ի եւ Հայաստանի զոյգ քայլերգներու ունկնդրութենէն ետք՝ ներկաները մէկ վայրկեան

յոտնկայս լուութեամբ, յարգեցին յիշատակը հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի բերաւոր նահատակներուն, ինչպէս նաեւ արցախեան 44 օրուան պատե-

Շար.ը էջ 6

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Եւրասիական տեան Դիսկուրսի Ծայրայեղ Մարտահրաւերը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Խորհրդարանի արտահերթ ընտրութիւնն ի ցոյց դրեց այն, որ Հայաստանի ներքաղաքական դաշտում կայ լրջագոյն ճգնաժամ եւրասիական տեան քաղաքական ուղի-րութեան հարցում: Ծգնաժամ այն պարագայում, երբ թուում է, որ դեռեւս 2012-13 թուականից Հայաստանի դէմ ուժգնացած եւրասիա-թրքական միջավայրի գրոհն եւ դրա ցաւագին ու ողբերգական գագաթնակէտ դարձած Արցախի դէմ 44-օրեայ պատերազմը բացել էին Հայաստանի հանրութեան աչքերը:

Իհարկէ, ինչ որ իմաստով նաեւ այդ հանգամանքն է արտայայտուել Նիկոլ Փաշինեանի գլխավորած ուժին տուած ձայնե-րում, յատկապէս հաշուի առնելով, որ նրա գլխավոր մրցակիցները ներկայանում էին ըստ էութեան նոյնիսկ Ռուսաստանի անունից, բացառապէս, առանց աւելորդ սեթեւեթանքի: Բայց, ընդհանուր առմամբ ակնառու է, որ եւրասիական տեան ուղղութիւնը, որ կարեւորագոյն է ոչ թէ ռուսականի փոխարինման, այլ կենսական բախման համար, ճգնաժամում է: Այստեղ առանցքային պատճառները ունեն խորը ուսումնասիրման կարիք, բայց առաջին եզրահանգումները թերեւս հնարաւոր է անել արդէն այսօր: Առաւել եւս, որ դրանց վերաբերեալ դիտարկումներ արել եմ նաեւ նախկինում:

Բանն այն է, որ ծայրայեղ ռուսահայտակարութեան մօտեցում-ներին գուգահեռ, Հայաստանում եւրասիական տեան ուղղութիւնը կամ

բովանդակութիւնը եւս ենթարկու-ել է ծայրայեղ մօտեցումների ու գնահատականների, իսկ դրա հե-տեանքով իռացիոնալութեան ամբողջական լոյսի տակ է յայտնուել ուղղութիւնն ինքնին, անկախ այն հանգամանքից, որ այդ տիրոջութում դիրքաւորուած եւ հայկական քաղաքականութեան բախման ուղղութեան կարեւոր հարցեր շոշափող ուժերի մի մասը գերծ է մնացել ծայրայեղացումներից: Միեւնոյն է, դաշտում բաւականին շոշափելի ծաւալի այդ իրողութիւնները կարողա-ցել են իռացիոնալացնել եւրասիական տեան «դիսկուրսը», այդպիսով հարուածելով դրան ամբողջ արեւելքով: Ահա այդ իմաստով, տուեալ տիրոջութում գործող հաւասարակշռուած ուժերի համար առանցքային խնդիր է «դիսկուրսը»-ն, ապա՞ծայրայեղացնելը: Այստեղ իհարկէ նրանց խնդիր բարդ է երկուստէք, քանի որ ոչ միայն պէտք է հաւասարակշռել ռուսա-կան պրոպագանդայի գրոհները, այլ նաեւ ծայրայեղ եւրասիական պրոպագանդայի ապակառու-ցողական եւ իռացիոնալ ազդեցու-թիւնը, ինչը յաճախ սննուցուած է նաեւ ռուսական պրոպագանդայի միեւնոյն աղբիւրներից, պարզա-պէս հակառակ կողմից: Այս մարտահրաւերների լուծումը պահանջում է բաւականին մշակուած եւ հետեւողական աշխատանք, ինչը յոյժ կարեւոր է Հայաստանի դիմադրունակութեան ու ձկուսութեան համար, այդ թուում ոչ միայն եւրասիական տեան «դիսկուրսի» ծաւալ-ման, այլ նաեւ հայ-ռուսական յարաբերութեան արդիւնաւէտութեան բարձրացման նկատառումով:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ձեր Արածից Գո՞՛՛՛ր էք

Տաւուշի թեմի առաջնորդ Տէր Բագրատ եպիսկոպոս Գալստանեա-նը ֆեյսբուքեան իր էջում գրել է. «Դուք թողեցիք ինձ, մոռա-ցաք իմ սուրբ լեռը եւ սեղան գցեցիք դեւերին՝ բաժակ բարձ-րացնելով Բախտի աստու պատ-ուին: Ես էլ ձեզ արի եմ մատնելու, եւ ամէնքդ կոտորուելու էք, որովհետեւ կանչեցի ձեզ, բայց չլսեցիք, խօսեցի, բայց դուք ականջ չդրեցիք, իմ առաջ հարուսթիւն կատա-րեցիք, ինչ էլի ցանկանում, ա՛յն ընտրեցիք»:

Այսպէս լաւ է: Մի հատ էլ թող կաթողիկոսը բանադրանքի ենթարկի ժողովրդին, յաւերժ անի-ծի եւ նզովի:

Թէ բա՛ դուք ականջ չդրեցիք: Իսկ դուք ակա՞նջ էք դրել ժողովրդի ձայնին: Ընդհանրապէս, դուք կապ ունեցե՞լ էք ձեր հօտի հետ: Շփուե՞լ էք մարդկանց հետ, փորձե՞լ էք իմանալ, թէ ժողովուրդն ինչ յոյզեր ունի, ինչ է մտածում, ինչ տրամադրուածութիւն ունի, ուզածը ինչ է, որն է ժողովրդի պատկերացումը արդարութիւնը, եւ որը՝ անարդարութիւնը, ինչն է համարում չարիք, ինչից է տագ-նապում, բարոյական ինչ չափա-նիշներով է առաջնորդուում:

Գիտէի՞ք, որ ձեր կաբինետ-ներից ու եկեղեցու շէնքերից դուրս գոյութիւն ունի ժողո-վուրդ, որին պէտք է ճանաչել, եւ որին պէտք է ծառայել, ոչ թէ հակառակը՝ ժողովուրդը պիտի ձեզ ծառայի:

Այս ընտրութիւններում դուք ձեր վարքագծից գո՞՛՛՛հ էք: Քանի՞ անգամ էք կանգնել իշխանութեան եւ ընդդիմութեան արանքում, կողմերին հանդուրժողականութեան, պարկեշտութեան, բանականու-թեան, սթափութեան եւ զսպուա-

ծուլութեան կող արել: Քանի՞ անգամ էք դատաւարտել թշնամանքի եւ ատելութեան համատարած մթնոլորտը, հայհոյանքները, վիրաւորանքները, սպառնալիքներն ու շանտաժի դրսեւորումները:

Կապ չունի՞ ում կողմից: Քա-նի՞ անգամ էք քաղաքական ուժե-րին յիշեցրել, որ չի կարելի է հեռանալ քրիստոնէական արժէք-ներից, չի կարելի խախտել Յիսուսի պատգամները:

Քանի՞ անգամ էք դուք ձեր իրական առաքելութիւնն իրակա-նացրել: Ոչ մի անգամ: Հերիք չէ, բան չէք արել, մի բան էլ՝ կաթո-ղիկոսից բռնած, խրուել էիք քաղաքական գործընթացների մէջ: Երբ Եկեղեցին չպէտք է խառնուի քաղաքականութեանը: Պաշտօնեա-նների հրաժարականներ էիք պահանջում, յանցագործներին ազատ արձակելու միջնորդութիւններ եւ երաշխիքներ էիք ներկայացնում, Քոչարեանի «ուսակրօնակալով» էիք գբաղուած: Բացառապէս, չէին էլ թաքցնում. կաթողիկոսախառն, իզ-միր լեանախառն, միտինգախառն, քարոզախառն...

Ահա այսպէս, ժողովրդին ոչ-խարի տեղ են դրել, հիմա եկել, ասում են՝ ձեզ արի ենք մատնելու, եւ «ամէնքդ կոտորուելու էք»:

Դէ որ «Հայաստան» դաշինքի անդամ, դաշնակցական Գեղամ Մա-նուկեանը յատարարի, որ Նիկոլին ընտրող բ.-ի տղայ է, սա էլ պիտի անիծի այդ ընտրողին: Դուք եւ այս ընդդիմութիւնն իրար արժա-նի էք:

«ՁՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Ձայների Նուագագոյնը 10-12 Տոկոսը «Պատիւ Ունենն» Ու «Հայաստան» Դաշինքը Ստացել Եմ Ընտրակաշառքի Դիմաց

ԱՐՓԻ ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ

«Եթէ չլինէր ընտրակաշառքը, ապա վստահաբար «Պատիւ Ունենն» դաշինքն առհասարակ խորհրդարան չէր անցնի, իսկ «Հայաստան» դաշինքն առաւելա-գոյնը 12 տոկոս ձայն կը ստա-նար»,- Civic.am-ի հետ գրոյցում ասաց «Ազատ Քաղաքացի» ՀԿ նախագահ Յովսէփ Խուրշուդեանը՝ ընդգծելով, որ ընտրակաշառքը այս անգամ էլ մեծ ազդեցութիւն է ունեցել ընտրութիւնների արդիւնքների վրայ:

«Անկախ Դիտորդը» եւս ասուելիսում յայտնեց, որ ընտ-րութեան օրը եւ նախընտրա-կան քարոզարշաւի ժամանակա-հատուածում իրաւապահ մարմիններին իրենց կողմից ուղարկուել է յանցագործութեան մասին 30 հաղորդում, որոնց ծանրակշիռ մեծամասնութիւնը վերաբերել է ընտրակաշառքի դէպքերին:

Ըստ Խուրշուդեանի՝ ընտրա-կաշառքի ազդեցութեան չափման լաւագոյն ցուցիչը նախորդ՝ 2018 թուականի ու այս ընտրութիւններին առաջին մի քանի ժամուայ մասնակցութեան տարբերութիւնն է: «Ընդհանրապէս կեղծարարու-թիւնը, ընտրողների ընտրանե-ղամասեր բերման ենթարկելը տեղի է ունենում առաւօտեան ժամե-րին, որպէսզի յետոյ, ամբողջ օրը,

այսպէս կոչուած «տասովչիկնե-րը», կարողանան գբաղուել այն քաղաքացիներով, ովքեր ընտրա-կաշառքը վերցրել են ու չեն եկել ընտրութեան: Որ գնահեն նրանց, գնան տուն, ստիպողաբար բերեն տեղամասեր: Հիմա, երբ համեմա-տում ենք 2018 թուականի ու այս ընտրութիւնները, ապա տեսնում ենք, որ 2018-ին առաւօտուան ժա-մերին ոչ մի կուտակում չէր լինում տեղամասերի մօտ, դեռ տեղամասերը չբացուած մարդիկ տեղամասի դիմաց չէին կուտակ-վում: Բայց այս ընտրութիւններին մենք տեսնք, որ առաջին երեք ժամուայ մասնակցութեան թիւը 110-120 հազարով աւել էր 2018-ի նոյն ժամանակահատուածի ընտ-րողների թուից: Եւ կարող ենք վստահաբար պնդել, որ այդ 110-120 հազարը բերուած մարդիկ են եղել, այսինքն ընտրակաշառք վերցրած ընտրողներ են, որոնք բաշխուած են «Հայաստան» եւ «Պա-տիւ ունեն» դաշինքների միջեւ: Այդ երկու ուժերն են ընտրակա-շառք բաժանել: Այո, ընտրակա-շառքն ազդել է այս ընտրութիւն-ների վրայ, 110-120 հազարը փոքր թիւ է: Նուագագոյնը 10-12 տոկոսի չափով ընտրակաշառքն աշխա-տել է», - ասաց Խուրշուդեանը՝ հակառակում, որ ազդել է նաեւ տարբեր ընկերութիւնների կողմից աշխատողներին ուղղորդելը, պարտադրելը:

Մեր գրուցակցի խօսքով՝ արտահերթ խորհրդարանական ընտ-րութիւններում ընտրակաշառքի բացակայութիւնը կարող էր յանգեցնել նրան, որ այդ 12 տոկոսը բաշխուէր, թէ՛ «Քաղաքացիական Պայմանագիր» եւ թէ՛ միւս խաղա-ցողների վրայ եւ մեծացնել միւս քաղաքական ուժերի՝ խորհրդա-րանում յայտնուելու շանսերը: «Մի-անշանակ «Պատիւ Ունեն»-ը չէր անցնի եւ փոխարենը կ'անցնէր «Հանրապետութիւն» կուսակցու-թիւնը, իսկ «Հայաստան» դաշինքը մաքսիմում կը հաւաքէր 12-15 տոկոս՝ բարոզութեան շնորհիւ: Արդիւնքում Ազգային ժողովում ընտրողների յարաբերակցութիւնը այլ կը լինէր: «ՔՊ»-ի ձայներն աւելի շատ կը լինէին, երկրորդ ուժը կը լինէր «Հանրապետու-թիւն» կուսակցութիւնը, իսկ «Հա-յաստան» դաշինքն աւելի քիչ ձայնով ընդդիմադիր ուժ կը լինէր», - նշեց Խուրշուդեանը:

Ամէն դէպքում, ըստ մեր գրուցակցի, այդ երկու ընդդիմադիր ուժերը շատ աւելի մեծ ծաւալի ընտրակաշառք են բաժանել, քան ստացել են ձայներ: «Հասարա-կութիւնը իրենց պատժեց: Նոյնիսկ այն մարդիկ, ովքեր իրենցից կաշառք էին վերցրել, իրենց չընտրեցին ու պատժեցին 20 տարի նոյն ընտրողին նուաստացնելու, կեղե-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԵ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com


(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեան Սկսած Է Քաղաքական Խորհրդակցութիւններ Տարբեր Ուժերու Հետ



Նիկոլ Փաշինեան կը հանդիպի «Ջանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ՝ Արամ Սարգսեանի հետ

Արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու նախնական արդիւնքներով մեծամասնութիւն ստացած «Քաղաքացիական պայմանագիր» վարչապետի թեկնածու՝ Նիկոլ Փաշինեան ալ յօրհանել է կը սկսի երկխօսութիւն ընտրութեան մասնակից այն ուժերուն հետ, որոնք հակուած են երկխօսելու:

Յունիս 21-ի յետընտրական հանրահաւաքին այս մասին յայտարարեց Նիկոլ Փաշինեան՝ ընդգծելով քաղաքական ճգնաժամը արդէն յաղթահարուած է. «Մենք պարզուրէն ենք ձեռք համախմբման մեր ձեռքը՝ ընդգծելով, որ դա չի կարող որեւէ կերպ կասկածի տակ դնել ժողովրդի առաջ մեր ստանձնած պարտաւորութիւնը գործարելու պողպատէ մաստաթը եւ Հայաստանում հաստատուելու իրականութիւնը եւ օրէնքի դիկտատուրա»:

Կառավարութեան էջին վրայ յայտնուեցան տեսանիւթեր հանդիպումներէն, ուր Փաշինեան կը լսէր արտախորհրդարանական ուժերու գնահատականները, դիտարկումները եւ մտահոգութիւնները:

«Այսպէս «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնն իր դերն ունեցել է մեր քաղաքական կեանքում, ամիսսում եմ, որ չէք լինելու ծրագրում մարման խորհրդարանում», - դիմելով ընդդիմադիր կուսակցութեան ղեկավար Էտնոն Մարուքեանին՝ ըսաւ Նիկոլ Փաշինեան: «Համերաշխութեան օրակարգը պարտուեց», - Մարուքեան պատասխանեց:

«Ես յոյս ունեմ, որ նոր ձեւաւորուած խորհրդարանը եւ խորհրդարանական ընտրութիւններին անցկացումն ամբողջութեամբ կարող են հիմք հանդիսանալ երկրում ներքաղաքական ճգնաժամը յաղթահարելու համար», - ընդգծեց ԼՀԿ-ի ղեկավարը:

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ՝ Արամ Սարգսեան ներքաղաքական խնդիրներու վերաբերեալ իր տեսակէտները յայտնեց:

«Հիմնական բանալի բառը ձեր բոլորի վարչապետ լինելն է անկախ նրանից՝ իրենք որ խմբից են: Ի հարկէ, հասկանում եմ, որ այն խմբերում 20 տոկոսն է մոլորեալ, որոնք վարչապետն արժի լինել իսկապէս, միւսներն այլ նպատակներ ունեն՝ իրենց նախկին ունեցած ազդեցութիւնները վերականգնելու», - ըսաւ Սարգսեան:

Առանձին հանդիպումներ տեղի ունեցած են նաեւ «Շիրինեան-Բաբաջանեան ժողովրդավարներու դաշինքի» առաջնորդներ՝ Լեւոն Շիրինեանի ու Արման Բաբաջանեանի հետ: Երկուքն ալ պատրաստակամ են օգնել իշխանութեան յեղափոխութեան արժէքները մինչեւ վերջ կեանքի կոչելուն:

«Կարեւոր էր յեղափոխութեան շարունակութիւնը», - նշեց Շիրինեան:

«Ժողովրդի իշխանութիւնը պաշտպանելու գործում մենք անմնացորդ կերպով պատրաստ ենք սատար լինել», - ընդգծեց Բաբաջանեան:

«Մեծ պատասխանատուութեան տակ էք մտել», - «Ազատական» կուսակցութեան ղեկավար՝ Սամուէլ Բաբայեան դիմելով Փաշինեանին՝ շեշտեց, որ պէտք է ապահովել ներքին կայունութիւն՝ պետութեան բարօրութեան համար. «Բոլորն, իմ կարծիքով, իրենց փառասիրութիւնները պէտք է ցած դնեն ու փորձեն համագործակցել յանուն մեր պետութեան, յանուն մեր ապագայի»:

Իշխանութեանն ղատական ոլորտին մէջ լուրջ բարեփոխումներ կ'ակնկալէ «Արդար Հայաստան» կուսակցութեան առաջնորդ՝ Նորայր Նորիկեանը, որ թեթեւօրէն ակնարկեց առկայ խնդիրներու մասին. «Հիմա առաւել եւս համոզուած եմ, որ մեր սերնդի պարտքն է ուղղակիօրէն այդ ոչ ֆորմալ բարբերը արմատախիլ անել այդ ոլորտից»:

Ընտրութիւններու արդիւնքները ցոյց տուին, որ քաղաքական դաշտը մրցունակ չէ, իրականութեանն կտրուած է, «Քաղաքացու որոշում» կուսակցութեան ղեկավար՝ Սուրէն Սահակեանի նկատողութիւնն էր Փաշինեանին. «Պէտք է շատ աշխատել, որ այս մոխրացած դաշտում նոր ծիլեր առաջանան»:

Խորհրդարանական 5 տոկոսի շեմը չչաղթահարած ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը, որ դեռ պաշտօնական յայտարարութիւն չեն տարածած ընտրութիւններու վերաբերեալ, մինչեւ հիմա չեն արձագանգած նաեւ Փաշինեանի այս կոչին:

«Ազգային-ժողովրդավարական Բեւեռ»-էն յայտնած են, որ մերժած են հանդիպման առաջարկը եւ նպատակայարմար չեն համարած:

Նախագահ Արմէն Սարգսեան Շնորհաւորած Է «Քաղաքացիական Պայմանագիր» Կուսակցութեան Յաղթանակը

Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի եւ նախագահ Արմէն Սարգսեանի միջեւ տեղի ունեցած է հեռախօսազրոյց:

Ըստ վարչապետի պաշտօնակատարի գրասենեակին՝ Արմէն Սարգսեան շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանը արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն «Քաղաքացիական պայմանագիր»

կուսակցութեան յաղթանակի կապակցութեամբ:

Նախագահը Հայաստանի ապագայ կառավարութեան մաղթած է յաջողութիւններ՝ ի նպաստ Հայաստանի հետագայ զարգացման, առաջընթացի, ժողովուրդի բարեկեցութեան ու պետութեան անվտանգութեան ապահովման:

Ռոպերթ Քոչարեան Կողմ Է Մանուաթները Վերցնելուն

«Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածու՝ Ռոպերթ Քոչարեան նշած է, որ առայժմ վերջնական որոշում չկայ մասնաթիւները վերցնելու վերաբերեալ: Ինչ կը վերաբերի իր անձնական կարծիքին, Ռոպերթ Քոչարեան կը համարէ, որ այդ մասնաթիւներով պայքարը շարունակելու լուրջ հնարաւորութիւն ստացած են: Անոր խօսքով, խորհրդարանական պայքարը պիտի ուժեղացնէ փողոցային պայքարը:

Պատասխանելով հարցին՝

արդեօք պարտուած են, Քոչարեան խորհրդարանական ընտրութիւնները համեմատած է նախագահական ընտրութիւններուն հետ, ուր անոր խօսքով, մրցանակը մէկն է, իսկ խորհրդարանի պարագային բոլոր ուժերը, որոնք կ'անցնին խորհրդարան, չեն պարտուիր:

Ռոպերթ Քոչարեանի կարծիքով, եթէ իշխող ուժը շարունակէ աշխատիլ նոյն ոճով, եւս մէկ արտահերթ ընտրութիւններ հնարաւոր են:

Գեղարքունիքի Մէջ Կը Նախատեսուի Ռուս Սահմանապահներ Տեղակայել

Ռուս սահմանապահներու տեղակայման ու սահմանէն Հայաստանի եւ Ատրպէյճանի զինուած ուժերու ետ քաշուելու շուրջ հակակողմը կը բանակցի Ռուսաստանի հետ, լրագրողներուն այսօր՝ Յունիս 22-ին տեղեկացուցած է Զինուած ուժերու Գլխաւոր շտաբի պետը:

Արտակ Դաւթեան, սակայն չէ յստակացուցած, թէ խօսքը միայն Գեղարքունիքի սահմանի մասին է, թէ՛ նաեւ Սիրնիքի: Այնուհանդերձ պաշտօնեան համոզմունք յայտնած է, թէ ատրպէյճանցի զինծառայողները ետ պիտի քաշուին:

«Վերջնական, երբ որ կը լինի ե՛ւ ժամկէտի առումով, ե՛ւ կատարման՝ բուն տեխնիկական հարցերով, լրացուցիչ կ'ասուի», - ըսաւ Դաւթեան:

Ճշդող հարցին, թէ ատրպէյճանական կողմէն համաձայնութիւն կայ, «քանի որ դուք վստահ ստուծ էք, որ լինելու է այդպէս», Հայաստանի զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետը պատասխանեց. - «Մենք մեր տարածքում Ատրպէյճանին հարցնելու ոչինչ չունենք, որպէսզի հարցնենք, բայց բանակցութիւններն ընթանում են ուսական կողմի հետ, որովհետեւ կան հարցեր, մեր նպատակը, որ կայ, առանց բախումների մեր տարածքում յայտնուած ատրպէյճանական ստորաբաժանումների յետքաշումն է»:

Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան



Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ Արտակ Դաւթեան

«Ազատութիւն»ի հետ գրոյցին ըսաւ, որ բանակցութիւնները կ'ընթանան Գեղարքունիքի Սոթքէն մինչեւ Սիրնիքի խոզնավար հատուածի շուրջ:

«Բանակցութիւններ են ընթանում հիմնականում այդ հատուածներում խնդիրը կարգաւորելու համար, բայց խնդիրը կարգաւորելուց յետոյ երեւի նման անհրաժեշտութիւն նոյնիսկ չի լինի: Այսինքն՝ երբ որ սահմանազատում, սահմանագծում տեղի ունենայ, ապա այդտեղ արդէն կը տեղակայուեն, բնականաբար, Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանապահները», - նշեց Գրիգորեան:

ԿԸՅ-ն Բաւարարած Է Չարչեանը Ազատութենէն Զրկելու Միջնորդութիւնը

ԿԸՅ-ն բաւարարած է «Հայաստան» դաշինքի պատգամաւորութեան թեկնածու՝ Արմէն Չարչեանի վերաբերեալ դատախազութեան ներկայացուցած միջնորդութիւնները՝ անոր նկատմամբ քրէական հետապնդում յարուցելու եւ զինք ազատութենէն զրկելուն համաձայնութիւն տալու: Այս մա-

սին յայտնած են գլխաւոր դատախազութեան:

«Իզմիրլեան» բժշկական կեդրոնի ղեկավար՝ Արմէն Չարչեան ընտրութիւններու նախօրեակին աշխատակիցներուն պարտադրած էր մասնակցիլ ընտրութիւններուն այլապէս պիտի արժանանան «անհամաչափ պատասխանի»:

ԼՈՒՐԵՐ

Միջազգային Լրատուամիջոցները Չայաստանի Ընտրութիւններուն Մասին

BBC - Ի ռուսական ծառայութեան թղթալիցի գնահատմամբ՝ այս փաշինեանի «անսպասելի յաղթանակն է», փորձագէտները այսպիսի արդիւնք չէին սպասեր՝ փաշինեանի վարկանիշը փլուզուած էր անցեալ տարի Ատրպէյճանի հետ պատերազմին կրած պարտութենէն յետոյ:



«Բայց այստեղ շատերը կ'ըսեն, որ փաշինեանին տուած ձայները բողոք էին երկիրը 20 տարի դեկափարած երկու նախկին նախագահներու գլխաւորած ընդդիմութեան դէմ: Այս ընտրողներէն յետոյ վերջնականապէս հասկնալի դարձաւ, որ մարդիկ չեն ցանկար նախկին ռեժիմի վերադարձը», - եզրակացուցած է BBC-ի ռուսական ծառայութիւնը:

Հայաստանի գործող վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան խորհրդարանական ընտրութիւններուն պահէջ իշխանութիւնը, չնայած լայնօրէն կը մեղադրուէր Լեւոնային Ղարաբաղի տարածքին մէջ անցեալ տարուայ ռազմական պարտութեան համար, արձանագրած է «Ռոյթըրզը», նշելով, որ կառավարութիւնը արտահերթ ընտրութիւններ նշանակած էր փորձելով յաղթահարել Լեւոնային Ղարաբաղի եւ յարակից շրջաններու կորուստի հետեւանքով առաջացած քաղաքական ճգնաժամը:

«Ռազմական գործողութիւնները առաջացուցած էին միջազգային հանրութեան մտահոգութիւն, քանի որ Հարաւային Կովկասի տարածաշրջանը խողովակաշարերու միջանցք է բնական կազմ ու նաւթը համաշխարհային շուկայ հասցնելու համար: Մոսկուայի դաշնակից Հայաստանը իր տարածքին մէջ ռուսական ռազմակայան կը հիւրընկալէ, չնայած 2018-ին հակաքոռուփցիոն օրակարգով ու փողոցային բողոքի հաւաքներու հետեւանքով իշխանութեան եկած փաշինեանի օրօք այդ յարաբերութիւնները սառն էին: Տարածաշրջանային մէկ այլ ուժ՝ Թուրքիան անցեալ տարուայ հակամարտութեան աջակցած էր Ատրպէյճանին ու մօտիկէն հետեւած էր հայաստանեան զարգացումներուն»:

«Ռոյթըրզը» նշած է, որ ընտրութիւններուն ցոյց տուած երկրորդ արդիւնքը՝ Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած դաշինքը չէ ընդունած ընտրութիւններու արդիւնքները, համարելով, որ այն կը հակասէ անցեալ ութ ամիսներուն հանրային կեանքի տարբեր դրսեւորումներուն: Քոչարեան Լեւոնային Ղարաբաղէն է, տարածք, որ միջազգայնօրէն ճանչուած է որպէս Ատրպէյճանի մաս, նշած է «Ռոյթըրզը»՝ աւելցնելով, որ բնակչութեան մեծ մասը հայեր են: Յիշեցուցած է՝ Քոչարեանը Հայաստանի նախագահ էր 1998-2008 թուականներուն եւ կը մեղադրուէր անօրինական գործողութիւններու համար, երբ 2008-ի վիճարարոյց ընտրութիւններէն յետոյ արտակարգ դրութիւն մտցուց: Ոստիկանու-

թեան եւ ցուցարարներու բախումներու հետեւանքով առնուազն 10 մարդ զոհուած էր, նշած է «Ռոյթըրզը»:

«Ատոյիւթը Փրեսը» գրած է, որ փաշինեան արտահերթ ընտրութիւններ յայտարարած էր իր հրաժարականի պահանջով քանի մը ամիս շարունակուած բողոքի ցոյցերէն յետոյ, քանի որ ան Լեւոնային Ղարաբաղի համար Ատրպէյճանի հետ վեց շաբթուայ պատերազմը աւարտող խաղաղութեան համաձայնագիր ստորագրած էր: Ըստ համաձայնագրին՝ Ատրպէյճանը վերականգնած է Լեւոնային Ղարաբաղի եւ յարակից տարածքներու մեծ մասի նկատմամբ վերահսկողութիւնը, որոնք աւելի քան քառորդ դար գտնուած էին հայկական ուժերու վերահսկողութեան տակ: Հազարաւոր հայեր Երեւանի մէջ դուրս ելած էին փողոցներ՝ բողոքելով այդ գործարքին դէմ, այն համարելով «ազգային շահերու դաւաճանութիւն»:

«Տէլէլի Սապահը» գանգուածային բողոքի հաւաքներուն հետ յիշատակած է նաեւ Հայաստանի Զինուած ուժերու Գլխաւոր շտապի յայտարարութիւնը: «Ընտրութիւնները կատարուեցան նաեւ այն բանէն յետոյ, երբ Զինուած ուժերու Գլխաւոր շտապը պահանջեց փաշինեանի հրաժարականը, որ փաշինեան ռազմական յեղաշրջման փորձ գնահատած էր», - նշած է «Տէլէլի Սապահը»:

«Ալ Ճագիրան» յիշեցուցած է, որ փաշինեանը աղէտալի համարած էր համաձայնագիրը, բայց նշած, որ ստիպուած էր ստորագրել մարդկային եւ տարածքային աւելի մեծ կորուստներ կանխելու համար: «Մոսկուայի տեսանկիւնով փաշինեանը երաշխիք է, որ համաձայնագիրը ուժի մէջ կը մնայ, որ կը ներառէ նաեւ շուրջ 2 հազար ռուսաստանցի խաղաղապահներու տեղակայում Լեւոնային Ղարաբաղի մէջ», - ընդգծած է «Ալ Ճագիրան»:

«Ֆրանս Փրեսը» փաստած է, որ ընտրութիւններու արդիւնքները ցոյց տուին Նիկոլ Փաշինեանի կուսակցութեան յաղթանակը արտահերթ ընտրութիւններուն, որ կատարուեցաւ Ատրպէյճանի հետ պատերազմէն յետոյ առաջացած քաղաքական ճգնաժամը լիցքաթափելու նպատակով:

Գերմանական DPA գործակալութիւնը, հաղորդելով Հայաստանի ընտրութիւններու մասին, նաեւ մեկնաբանած է, որ Ռուսաստանը փաշինեանի յաղթանակի մէջ երաշխիքներ կը տեսնէ, որ Մոսկուայի միջնորդութեամբ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ ձեռք բերուած կրակը դադարեցնելու համաձայնագիրը կը պահպանուի:

ԵԱՀԿ/ԺՄԻԳ Ղիտորդները Նշեցին Որ Ընտրութիւնները Մրցակցային Էին Եւ Լաւ Կազմակերպուած



Միջազգային Ղիտորդները կը Ընդգնան իրենց Ընտրութեան Գնահատմանը

Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները մրցակցային էին եւ լաւ կազմակերպուած, սակայն բեւեռացուած եւ խաթարուած էին յարձակողական հետտրաքանութեամբ, նշած են միջազգային Ղիտորդները:

ԵԱՀԿ/ԺՄԻԳ Ղիտորդները հանդէս եկան մամլոյ ասուլիսով, ուր ներկայացուցին որոշ մանրամասնութիւններ երէկ՝ Յունիս 20-ին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու մասին:

«Ազգային անվտանգութեան խնդիրները քաղաքական խօսակցութեան մէջ գերակշռած են նախաքարոզչական եւ քարոզչական հատուածին», - նշած են Ղիտորդները աւելցնելով, որ բանավէճը տարուած է աւելի յաճախակի հնչող յարձակողական խօսքով եւ մեղադրանքներով՝ վատթարացնելով բեւեռացման բարձր աստիճանը եւ հետագային նուազեցնելով ուշադրութիւնը քաղաքական ծրագիրներու եւ քաղաքականութեան հանդէպ:

Ընտրութիւններու օրը ընդհանուր առմամբ խաղաղ անցած է, եւ Ղիտորդները մեծամասնութեամբ դրական գնահատական տուած են այցելուած ընտրատեղամասերու:

Քրեմլին Շնորհաւորած Է Հայ Ժողովուրդը

Ռուսաստանի նախագահի մամլոյ խօսնակ՝ Տմիթրի Փեսքով այսօր՝ Յունիս 21-ին ռուսաստանցի լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշած է, որ պաշտօնական Մոսկուայի ուշադրութեամբ կը հետեւէր հայաստանեան ընտրութիւններու ընթացքը:

«Քրեմլինը կը հետեւի ընտրութիւններու շուրջ ստեղծուած իրավիճակին եւ կը ցանկայ, որ ժողովուրդի որոշումը օգնէ երկրին՝ դուրս գալու զարգացման կայուն ուղիի վրայ», - յայտարարած է Վլատիմիր Փուտինի խօսնակը:

Մեկնաբանելով ընտրութիւններու արդիւնքները՝ Փեսքով ըսած է. - «Քրեմլինը կը տեսնէ փաշինեանի վստահ յաղթանակը ընտրութիւններուն եւ կը շնորհաւորէ հայ ժողովուրդը ընտրութեան առթիւ»:

Կարօ Փայլան Շնորհաւորած Է Նիկոլ Փաշինեանը

Թուրքիոյ խորհրդարանի ժողովուրդներու ղեմնկրատական կուսակցութեան հայազգի պատգամաւոր՝ Կարօ Փայլան շնորհաւորած է վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանը եւ անոր ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան Յունիս 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն առաւելագոյն ձայներ ձեռք բերելու համար:

Դիմատետրի իր էջով Փայլան մասնաւորապէս գրած է. - «Կը շնորհաւորեմ Նիկոլ Փաշինեանն ու իր կուսակցութիւնը, որ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու աւարտին ձեռք բերին մեծամասնութիւն եւ կառավարութիւն կազմելու իրաւունք»:

Մայր Աթոռ Ողջունած Է Փաշինեանի Կողմէ Զոգելոր Առաջնորդներուն Ուղղուած Երկխօսութեան Առաջարկը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրական գնահատած է երէկ՝ Յունիս 21-ի հանրահաւաքի ժամանակ վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանի կատարած անդրադարձը համերաշխութեան, միաբանութեան, համագրգային ողջներու ճի համախմբման կարեւորութեան, հայրենիքի անվտանգ, բարօր ու առաջընթաց կեանքի հաստատման գործով, ինչպէս նաեւ՝ քաղաքական դաշտի հայհոյութեան եւ ատելութեան խօսքին վերջ տալու անհրաժեշտութեան: Այդ մասին ըստուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այսօրուայ յայտարարութեամբ:

Մայր Աթոռը ողջունած է նաեւ վարչապետի պաշտօնակատարի կողմէ հոգեւոր առաջնորդներուն ուղղուած երկխօսութեան առաջարկը:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապէս հանդէս է եկել այս

դիրքերից եւ ակնկալում է, որ նոր ձեւաւորուող իշխանութիւնը գործնական եւ հետեւողական քայլեր կը ձեռնարկի Եկեղեցու հետ գործակցութեան իրենց իսկ առաջարկն իրականացնելու, ինչպէս եւ հանրային համերաշխութիւն ձեւաւորելու ուղղութեամբ: Հոգեւոր դասը՝ գիտակից իր հոգեւոր առաքելութեանը եւ դրա կարեւորութեանը յատկապէս նման ճգնաժամային իրավիճակներում, պիտի շարունակի անելամէջ անհրաժեշտը, որպէսզի մեր ժողովուրդը կարող լինի յաղթահարելու իր կեանքի դժուարութիւններն ու մարտահրաւէրները, որպէսզի հայրենիքի անկախացեալ այս փոքրիկ նշխարն ուժ գտնի իր մէջ վերականգնելու իր անվտանգութիւնն ու ամբողջութիւնը՝ շարունակելու ուղին դէպի նոր հարիւրամեակներ», - ըստուած է յայտարարութեան մէջ:

Փաշինեանի Տպաւորիչ Յաղթանակը

Շարունակուած էջ 1-էն

էր, որ ՀՀ քաղաքացին այս ընտրութիւններում անխուսափելիորէն յաղթելու է: Եւ ես ուզում եմ եւս մէկ անգամ իմ շնորհակալութեան եւ խոնարհումի խօսքերն ասել ՀՀ բոլոր քաղաքացիներին, որ այս դաժան փորձութիւնների միջով անցնելով մենք կրկին վերգտանք իրար որպէս մի ամբողջութիւն, եւ հաս հանրային եւ ազգային միասնութիւնը վերականգնելու ժամանակը:

կը կը պատրաստուի դիմելու Սահմանադրական Դատարան:

Միջազգային դիտորդական կազմակերպութիւնները յայտարարեցին որ, ընտրութիւնները մրցակցայի էին ու լաւ կազմակերպուած:

«Գողցուածը Վերադարձնել»
Եւ «Վերջ Տալ
Հայիոյախօսութեան»
«Ժողովուրդը ընտրութիւն»



նակն է,- ըստ փաշինեանի:
Ան ընդգծեց, որ Հայաստանի ժողովուրդը վերջին երեք տարուայ ընթացքին կատարեց երկրորդ չեղափոխութիւնը, եւ եթէ առաջինը ոչ բռնի, թաւշեայ ժողովրդական, չեղափոխութիւնն էր, 2021 թուականին տեղի ունեցաւ կրկին ոչ բռնի, կրկին ժողովրդական, բայց այս անգամ արդէն պողպատեայ չեղափոխութիւնը»:
Քոչարեան դաշինքը յայտարարեց որ, կը մերժէ ընդունիլ ընտրութիւններու արդիւնքը ու

ներով ցոյց տուեց, որ իր դէմ խաղ չկայ», Յունիս 21-ի երեկոյեան հանրահաւաքի ժամանակ յայտարարեց վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանը:
«Այսօրուայ հանրահաւաքով մենք ամփոփում ենք նախընտրական քարոզարշաւը, ընտրութիւնները, եւ յոյս ունեմ, որ մենք փաստացի այսօր կ'արձանագրենք, որ Նոյեմբերի 9-ին Հայաստանում արձանագրուած ներքաղաքական ճգնաժամը յաղթահարուած է, եւ մենք վաղուանից վերադառնում ենք լիարժէք աշխատանքի, բայց

Ձայների Նուագագույնը

Շարունակուած էջ 2-էն

քելու համար: Մարդիկ ապուշ չեն ու ամէն ինչ շատ լաւ հասկանում են: Ընտրողների մեծ մասը քաղաքացիական գիտակցութիւն դրսե-

ւորեց եւ չընտրեց այդ կեղեքիչներին, ովքեր իրենցից թալանուած գումարներն են վերադարձնում իրենց՝ գոռչների ձեռով», - եզրափակեց ծուրըզեանը:
«Civic.am» կայքէջ

Ամերիկայի Միացեալ Նահանգները Շնորհաւորած Է Հայաստանի Ժողովուրդը



Միացեալ Նահանգները շնորհաւորած է Հայաստանի ժողովուրդը Յունիս 20-ի խորհրդարանական ընտրութիւններու կապակցութեամբ: «Մենք կ'ողջունենք ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Ընտրութիւններու դիտարկման առաքելութեան ընդհանուր առմամբ դրական գնահատականը», - երկուշաբթի օր յայտարարած է ԱՄՆ-ի Պետական քարտուղարութեան խօսնակը:

Նետ Փրայսը գոհունակութիւն յայտնած է ԺՀՄԻԳ-ի նախնական եզրակացութիւններու առնչութեամբ, համաձայն որոնց՝ ընտրողներու իրաւունքները եւ հիմնարար ազատութիւնները յարգուած են, մասնակիցները կրցած են ազատօրէն քարոզարշաւ կատարել, եւ որ ԺՀՄԻԳ-ը ընտրութիւններու օրը քուէներու հաշուարկը դրական գնահատած է:

Միեւնոյն ժամանակ, պաշտօնական Ուաշինկթընը միացած է ԺՀՄԻԳ-ի մտահոգութիւններուն՝ կապուած մասնակիցներու խիստ բեւեռացուածութեան եւ բորբոքիչ հետորաբանութեան հետ: «Կը յորդորենք բոլոր քաղաքական ուղղութիւններուն յարգելու այս ընտրութիւններու արդիւնքները, երբ անոնք վաւերացուած ըլլան, մտահոգիչ խնդիրներու հետ կապուած կիրառելու ընտրութիւններու բողոքարկման իրաւական գործընթացը եւ խուսափելու քաղաքական վրէժխնդրութենէ, մինչ Հայաստանը կը շարունակէ հետամուտ

ըլլալ ինքնիշխան, ժողովրդավարական, խաղաղ եւ բարգաւաճ ապագային», - ըստուած է յայտարարութեամբ:

«Միացեալ Նահանգները յանձնառու է Հայաստանի հետ գործընկերութեան ամրապնդման՝ հիմնուած ընդհանուր ժողովրդավարական արժէքներու վրայ», - նշած է Փրայսը՝ բարձր գնահատելով բարեփոխումներու ուղղութեամբ Հայաստանի առաջընթացը եւ ջանքերը քոռուփցիայի դէմ պայքարի, քաջալերելով Հայաստանը «շարունակել այդ ճանապարհը՝ 2018 թուականի գարնան հայ ժողովուրդի արտայայտած իր դճերուն համահունչ»:

«Կոչ կ'ընենք բոլոր կողմերուն յարգելու օրէնքի գերիշխանութիւնն ու ժողովրդավարական սկզբունքները եւ անհամբեր կը սպասենք նոր կառավարութեան հետ աշխատանքին՝ ընդլայնելու մեր երկկողմանի յարաբերութիւնները եւ համագործակցութիւնը», - յայտարարած է Պետական քարտուղարութեան խօսնակը:

Նետ Փրայս նաեւ բարձր գնահատած է Հայաստանի ժողովրդավարական զարգացման դեսպան՝ Լին Թրէյսիի եւ Երեւանի մօտ ԱՄՆ-ի դեսպանատան ամբողջ անձնակազմի աջակցութիւնը: «Անոնց նուիրուածութեան եւ ջանադիր աշխատանքի միջոցով մենք կը շարունակենք առաջ մղել ԱՄՆ-Հայաստան գործընկերութիւնը», - ըստուած է յայտարարութեամբ:

պայմանները եւ միջավայրն այսօր էականօրէն փոխուած են, որովհետեւ ՀՀ-ն մեր կառավարութեանը, քաղաքական այս խումբին տուել է մաստաթ՝ երկրում հաստատելու օրէնքի եւ իրաւունքի դիկտատուրա, ժողովուրդն իրականացրել է պողպատեայ չեղափոխութիւն», - ըստ փաշինեանի:

Ան համաձայնելով, դիտորդներու դիտարկումներուն հետ, որ այս քարոզարշաւի ընթացքին օգտագործուած է յարձակողական հետորաբանութիւն, դիմեց քաղաքական եւ հանրային գործընթացի բոլոր մասնակիցներուն. «Հայաստանի ժողովուրդը կայացրել է իր որոշումը, ստեղծել է նոր քաղաքական իրադրութիւն եւ նոր քաղաքական իրավիճակ, եւ այդ իրավիճակի առաջին կէտն ու հանգրուանը հետեւեալն է՝ ես առաջարկում եմ բոլոր քաղաքական ուժերին, հանրային մասնակիցներին՝ սկսել մի պարզ կէտից, վերջ դնել հայհոյութեանը: Կոչ եմ անում մեր բոլոր կողմնակիցներին՝ վերջ դնել հայհոյութեանը, ան-

հարկի յարձակողականութեանը, անհարկի թշնամանքին, որովհետեւ մենք լրջագոյն մարտահրաւէրներ ի առաջ ենք, եւ մենք պէտք է մեր պետականութեան կառուցման այս նոր եւ հրաշալի էջը բացենք»:

Միեւնոյն ժամանակ Նիկոլ Փաշինեան շեշտեց, որ այս չինչանակեր, որ իրենք պիտի խուսափին ժողովուրդի առաջ ստանձնած որեւէ պարտաւորութենէ. «Հայաստանում լինելու է կարգ ու կանոն եւ պատասխանատուութեան անխուսափելիութիւն»:

Մէկ այլ առաջարկ ալ ունէր վարչապետի պաշտօնակատարը. «Կոչ եմ անում սկսել բանակցութիւններ գողացուածը վերադաձնելու վերաբերեալ, որը կը ծառայի ՀՀ ընկերային-տնտեսական օրակարգի սպասարկմանը»:

Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ պիտի սկսի քաղաքական բանակցութիւններ այն ուժերուն հետ, որոնք պատրաստ են համագործակցութեան: Ապա հոգեւոր երկխօսութեան կոչ ըրաւ հոգեւոր առաջնորդներուն:

Լուս Աճճելըսի Մէջ Տեղի Ունեցաւ Զնչակեան Քսան Մարտիրոսներու Ոգեկոչումը

Շարունակուած էջ 1-էն

րագմին իրենց կեանքը զոհաբերող քաջամարտիկներուն:

Կազմակերպիչ յանձնախումբի անունով ներկաները ողջունելէ ետք, օրուան հանդիսավար Մովսիս Քէօրօղլեան բացման խօսքին մէջ նշեց. «...Փարամազ եւ ընկերները կանխատեսելով հայ ժողովուրդին սպառնացող տիրու ճակատագիրը անոր առաջին առնելու համար ծրագրեցին իթթիհատի պարագլուխները չհզոքացնել: Սակայն աւանդ, դաւաճանութեան պատճառով անոնք մահուան դատապարտուեցան եւ «Կեցցէ Հայաստան» գոռալով կախաղան բարձրացան:

ՄԴՀԿ «Կայծ»- Երիտասարդաց Միութեան կողմէ Ալիսըն Լաֆարի եւ Հայ Ամերիկեան Խոր-

մը ստեղծած էր: Մեր վախն Ատրպէյճանէն էր բայց այդ տեղի չունեցաւ...: Այն ձգտումը որ ունէինք փոխակերպուեցան բանակցութեանց սեղանին, ատիկա Արցախի անվտանգութեան հարցն էր: Հայրենի իշխանութիւնները ժողովուրդին համոզեցին որ այդ հողերը մերն են: Սակայն ժողովուրդը իրագեկ չեղաւ բանակցութեանց իսկական գործընթացէն: Սեպտեմբեր 27ին դաժան իրականութիւնը բացուեցաւ... եւ այդ սուտը մնաց մեր քաջարի երիտասարդներու ուսերուն վրայ...: Պետական գանձը կողոպտեցին եւ իրենց դղեակները կառուցեցին...: Մենք ապրեցանք երազի ու պատրանքի մէջ»:


Ընկ. Հ. Սարաֆեան ի մէջ այլոց ըսաւ նաեւ «Մենք դժբախտաբար չկրցանք սորվել մեր սխալ-



հայրենիքին»:

Գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Ամունքով հանդէս եկան Սերա Այնթապլեան (Գառնիկ Աղդարեանի) «Քսանները», Անի Մարտիկեան (Արաքսի Գօփուշեան-Թաթուլեանի) «Երագանքը», իսկ հայրենասիրական եւ յեղափոխական երգերով երեկոյթը խանդավառեց շնորհալի երգիչ Արնօ Մկրտիչեան երգեհոնահարութեամբ Յարութ Զիրօղլեանի:

Աւարտին խօսք առաւ թեմիս առաջնորդ Գեղ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին ներկաներուն հետ բաժնեց «Ս. Էջմիածին» ամսագրին հետեւեալ պատումը:



հրամայեց հետեւել իրեն: Յայտնուեցին մի մութ բանասխցում: Այս ու այն կողմ նստած ու կանգնած էին 20 երիտասարդներ՝ խորխորկեցուածքով եւ արծուային հայեացքով: Տէր Հայրը սկսում էր հասկանալ: Պէտք էր վերջին հաղորդութիւնը տալ մահապարտներին: Բայց... նա սրբատուփ չունէր: Ինչպէ՞ս հաղորդութիւն տալ գաղափարի այս նուիրեալներին, որ պէսզի խաղաղ հոգով իրենց ժողովրդի եւ Մայր Եկեղեցու հետ



հուրդի (ՀԱՍ) անունով Հէրի Եունել իրենց ուղերձներուն մէջ դրուատեցին մեր հերոսներու գաղափարն ու հաւատամքը ազատ ու անկախ հայրենիքի անասանութեան, խաղաղութեան ու բարգաւաճման ի խնդիր:

Օրուան գլխաւոր բանախօսն էր ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան: Ան համապարփակ կերպով անդրադարձաւ

ներէն: Չափէն աւելի կ'ապաւինինք արտաքին աշխարհին եւ այդ հոգեբանութիւնը՝ կիրարկուած է մեր քաղաքականութեան մէջ: Ունինք ներկայիս նոր իրավիճակ՝ որ է գերիններ եւ անաւարտ պատերազմը: Մեր պարտականութիւնն է արդարօրէն ընդունիլ իրականութիւնը: ... Հայրենիքը՝ իրականութիւն է եւ պետութիւն է: Ընկերային արդարութիւնը եւ կաշառքի ոչնչացման գաղափարները որ քսաններն ունէին անոնք այսօր ալ



«1915 թուական: Հայ ժողովրդի պատմութեան ամէնից արհաւիրք եւ աղէտաբեր տարին: Մահասարսուռ խուճապի մէջ էր ողջ արեւմտահայութիւնը: Բայց վերահաս վտանգը չսասանեց հայի ապրելու կամքը եւ սեփական գոյութեան նկատմամբ հաւատը: Նա անդիմադիր զոհ չդարձաւ միայն, այլ նաեւ սեփական արժանապատուութիւնը պաշտպանող մարդիկ՝ երբեմն անհաւասար մարտերում գտնելու իր «իմացեալ մահը»:

Այդպիսի ըմբոստ ոգիներ էին նաեւ այն քսան մահապարտները, որոնց դէպի կառավարան տարաւ օսմանեան Բարձր Դուռը:

Ահա Հայրենիքի ազատութեան սրբազան գաղափարի համար նահատակուած այդ մարտիրոսների հետ է կապուած պատմական այս մասունքը՝ արծաթեայ փոքրիկ ձեռաց սուրբ խաչը: Այն պատկանում էր Կ. Պոլսի Մայր Եկեղեցու ծիսակատար հանգուցեալ Տ. Գալուստ քահանայ Պօղոսեանին:

Այդ օրը թուրք ոստիկանը նրան տարաւ գինուորական ատեան: Կէսգիշերին դուռը ձոնչաց մահագոյթ: Ոստիկանը Տէր Հօրը

Ներկաներուն ողջոյնի եւ «Հայրերու Օր»ուան առթիւ շնորհաւորական ջերմ խօսքերով հանդէս եկան ՀՄՄի Տիկնաց Օժանդակ Մարմնի ժրջանատենաստեղծի կարինէ Գօճապապեան եւ ընկ. Գաբրիէլ Մոլոյեան: Ինքնագիր եր-


գի յօրինումով հանդէս եկաւ Յարութ Տէր Դաւիթեան, իսկ գուարձախօսութիւններով միջնորդը խանդավառեց վարդան Գօճապապեան:

Այս բարեպատէճ առիթով կազմակերպիչ յանձնախումբին կողմէ Պատուոյ Գիրով պարգեւատրուեցաւ օրուան հովանաւոր՝ Յարութ Պոյաճեանը եւ յատուկ ծաղկեփունջով մըն ալ իր ազնուափայլ Տիկինը՝ Լուսինը, ձեռամբ ՄԴՀԿ վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեանի առ ի գնահատութիւն տաանեակ տարիներու իրենց անխոնջ նուիրումին ու նիւթա-բարոյական աջակցութեան եւ տարբեր կառոյցներու ազգօգուտ նախաձեռնութիւններուն:

Չուարթ երեկոն շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր, փոխադարձ բարեմաղթութիւններու, շնորհաւորութիւններու եւ երգ ու պարի ջերմ մթնոլորտի մէջ, միջնորդ մը՝ որուն կարօտն ունէին շուրջ մէկ ու կէս տարիէ ի վեր, տիրող չարագուշակ համավարակին պատճառով:

Բարի երթ ՀՄՄի Տիկնաց Օժանդակ Մարմնին եւ նորանոր յաջողութիւններ:

Միեր Մկրտչեան 90 + 1



ԷԼՄԻՐԱ ԳԱՄՊԱՐԵԱՆ ԳՆՈՒՍՏԱՎՐԱԳՐՈՂ

Բնութիւնը շուրջըն նրան օժտել էր անսահման տաղանդով: Մհեր Մկրտչեանն այն արուեստագէտն էր, որի մէջ համահունջ էին դերասանի ամենակարեւոր առանձնապատկութիւնները՝ ողբերգուի մեծ շնորհն ու կատակերգուի անսպառ հիւմորը: Նա բեմի վրայ կիրնոյում փայլեց իր բացառիկ տաղանդով եւ հեռացաւ կեանքից թողնելով իր ուրոյն հետքն ու ձեռագիրը, հայ կիրնոյի եւ թատրոնի պատմութեան անմոռաց էջերում:

2020 թուականի Յունիսի 4-ին լրացաւ մեծ դերասանի ծննդեան 90-ամեակը: Չարաբաստիկ covid-19-ի պատճառով, Մեծն Մհեր Մկրտչեանին նուիրուած յոբելեանական երեկոն յետաձգուեց եւ այն տեղի կ'ունենայ մէկ ամսից՝ Յունիս 15, 2021-ին, երեկոցեան ժամը 7-ին, Արպաթ ճաշարանի գեղատեսիլ սրահում: Թէ ինչո՞ւ 90 + 1,

համար, ալլել երիտասարդները, պատանիները, Սփիւռքով մեծացող սերունդը եւս հաղորդակից լինի մեծն շանսոյցի ստեղծագործական աշխարհին: Ուստի պատահական չէր, որ գրական երեկոյի

անակնկալը կը բացայայտուի երեկոյի ընթացքում, որտեղ ժամեր շարունակ կը թեւածի Մկրտչեանական շունչն ու տրամադրութիւնը: Երեկոյին կը մասնակցեն բազում ճանաչուած արուեստագէտներ եւ մեր համայնքից եւ հայրենիքից:

Մեծարման երեկոյի կազմակերպիչն է Լոս Անճելըսում 15 տարուայ կենսագրութիւն ունեցող «Ուրախ Գիւմրի» հեռուստաժրագրի տնօրէն, 12 զրքերի հեղինակ, «Հայ Ֆիլմ» կինոստուդիայի դերասան՝ Ռուբէն Գասպարեանը՝ ՂՈՒՐԲԱՆԸ, որ միաժամանակ մեծ դերասանի մտերիմ ընկերն է: Մենք բոլորս ակնատես կը լինենք բացառիկ մեծարման երեկոյի:

Մհեր Մկրտչեանը արժանի է նման գնահատանքի: Չէ՞ որ նման տաղանդները դարը մէկ են ծնուած: Տեղերը խիստ սահմանափակ են:

Մանրամասների համար գանգահարել՝ 818-570-6565

Աբրամեանի բարձրաճաշակ կատարումները նորովի արժեւորեցին տաղանդաշատ երգահանի համարակրկային արուեստը:

Ներկաները վայելեցին նաեւ Մարիանա Ղազարեանի պարը՝

Գրական-Երաժշտական Երեկոյ՝ Նուիրում Շարլ Ազնաւուրի Յիշատակին



Միաթրի Սուրբ Յարութիւն եկեղեցու հովանաւորութեամբ գործող «Հայ Տուն» կեդրոնում կազմակերպուող գրական երեկոյները դարձել են աւանդութիւն: Հայ անուանի արուեստագէտներին նուիրուած միջոցառումները միշտ հետաքրքրական են ու ճանաչողական. իւրաքանչիւր միջոցառում բազմակողմանիորեն բացայայտում է տուեալ արուեստագէտին: Նշենք նաեւ, որ գրական երեկոյները կեանքի են կոչում տիկին Յասմիկ Մելիքսեթեանի անմիջական ջանքերի եւ անձնուէր աշխատանքի շնորհիւ:

Յունիս 12-ին կայացած հերթական գրական երեկոն նուիրուած էր աշխարհահռչակ երգիչ-տակին: Շատ կարեւոր է, որ տաղանդաշատ երգիչ-բանաստեղծի ստեղծագործութիւնները ճանաչելի լինեն ոչ միայն աւագ սերնդի



բացումը կատարեցին Սուրբ Յարութիւն վարժարանի աշակերտները՝ ամուսնաբերով Շ. Ազնաւուրի՝ հայերէն թարգմանուած բանաստեղծութիւնները: Միլվա Ղազարեանի, Լուսինէ Բեգիրզանեանի, Էդգար Զիրոյեանի, Ալինա Սահակեանի, Նազիկ Պօղոսեանի, Ելենա Խաչիբեկովայի, Ռիմա Խարաչեանի, Էլինէ Կալեմկերեանի տպաւորիչ ամուսնաբեր շնորհիւ ներկաները վայելեցին Շ. Ազնաւուրի ինքնատիպ բանաստեղծութիւնները, իսկ ջուրթակահարուհի Գայանէ Գրիգորեանի եւ կիթակահար Մհեր


Շառլ Ազնաւուրի կատարմամբ Սալաթ Նովայի «Յես քո զիմեթը» երգի հնչիւնների ներքոյ:

Ֆրանց, Սոնա, Արմենակ եւ Անի Բոյոյեանները հանդէս եկան Շառլ Ազնաւուր-էդիթ Պիաֆ ստեղծագործական զոյգի բոհեմական պատմութիւնները ներկայացնող հետաքրքիր բեմագրութեամբ:

Երեկոն լի էր անակնկալներով. Ներկաները մեծ ոգեւորուածութեամբ եւ սիրով ողջունեցին համացանցային ուղիղ կապով երե-

Յովահննես Գանգեսեան Վաստակաշատ Մտաւորականի Յիշատակին Մահուան 8-րդ Տարելիցին Առթիւ

Յովահննես Գանգեսեանի Յորելիցականին Արտասանուած Գառն Մայիս 22, 2008-ին



ՏՕՔԹ. ԳԵՈՐԳ Պ. ՔԵՇԻՇԵԱՆ

Յովահննես Գանգեսեան, արդարեւ, սփիւռքահայ մեր կեանքին մէջ, ա՛յն քիչերէն է որ լի՛ովին կ'արդարացնէ, իր վաստակով 7 Յովնան Սրբազանին արտայայտած մէկ միտքը՝ թէ «ողջունելի են անոնք որոնք կը կենսագործեն, կը թրծեն, կը ծաղկեցնեն աստուածատուր իրենց շնորհքներն ու տաղանդը, գեղեցկացնելով նախ՝ իրենց անձը, ապա նաեւ՝ իրենց շրջապատը... երախտաւորներու այդ բաղանջին: Մեծ եղեռնէն մագապուրած ճողոպուրած համեստ ընտանիքի գաւակ, ան իր ուսումը կը ստանայ Պէյրուսի Սահակեան Բարձրագոյն վարժարանին մէջ:

Իրերամերժ մթնոլորտի մէջ մեծցող, չքաւոր, բայց ուսումնաստեւնչ այս պատանին, կը յաջողի՛ ընդունուիլ, ի գարմանք բոլորին, Պէյրուսի Ազգային ձեմարանը, ուր, ազգային մեր տիտաններու՝ Լեւոն Շանթի, Աղբալեանի հայաբաբախ շունչին տակ կը դարբնուի ան: Կը տիրանայ՝ արեւմտահայ լեզուի նրբութիւններուն թէ հայ մշակոյթի եւ հայոց պատմութեան հիմնական գիտելիքներուն: Հայեցի դաստիարակութեամբ եւ գիտութեամբ գինուած, կը նետուի կեանքի ասպարէզ: Չորս տարի ուսուցիչ է Պէյրուսի Սահակեան վարժարանին մէջ: Ապա պաշտօնեայ՝ Պէյրուսի «Federal Bank»-ի մէջ վեց տարի: Հայ գրականութեան, հայ դպրութեան հանդէպ իր տածած խանդավառութիւնը գինք կը մղէ, ի գործ դնելով իր «պանքայ»-ի մէջ սորված հաշուապահութեան, «Business»-ի գաղտնիքները, եւ, լենելով՝ նաեւ իր նոյնքան մշակութասէր, տպագրիչ եղբոր՝ Կարապետ Հաննէսեանի մասնագիտութեան, միասնաբար հիմը կը դնեն 1952-ին, Պէյրուսի Հայկական թաղամասի մը մէջ, Շիրակ հաստատութեան, գրատուն, հրատարակչատուն, տպարանին, որ կոչուած էր այնուհետեւ, դառնալով Սփիւռքահայ մեր ազգապահպանման հզօր գործոններէն մէկը:

Ես, 55 տարիներու վրայ երկարող բարեկամութիւն եմ մշակած Յովհաննէսին եւ իր ընտանիքին հետ, իր կնոջ՝ աննման, հաւատարիմ, հեզահամբոյր, իր ամենավստահելի խորհրդատուն, եւ պահպան հրեշտակը հանդիսացող՝ Սօսի Գեւորեան Հաննէսեանի, իր երկու պատուական գաւակներուն՝ Շահէին եւ Հրաչին: Յովհան-

նէս բախտաւոր է տակաւին իր հինգ սիրասուն թոռներով:

Յովհաննէսին վաստակին հաշուեկշիռը եթէ կ'ուզենք ընել, կը բաւէ որ թուենք իր գործունէութեան, իր իրագործումներուն բնագաւառները՝

1. Հաննէսեան՝ Մշակոյթի գործիչը:
2. Հաննէսեան՝ Կրթական մշակը:
3. Հաննէսեան՝ Հրատարակիչը:
4. Հաննէսեան՝ Գրողն ու բառարանագէտը:
5. Հաննէսեան՝ Հրապարագիւրը:
6. Հաննէսեան՝ Մտաւորակաւորը:

1. Կրթական վաստակաւոր մշակը

Հեղինակած է բազմատասնեակ գրքոյկներ հայ լեզուի ուսուցման մարզին ներս: Ան իր գրասէր, տպագրիչ եղբոր՝ Կարապետ Հաննէսեանի հետ, դարբինները կը հանդիսանան մեծ եղեռնէն ազատուած եւ Միջին Արեւելեան արաբական երկիրներու մէջ կայք հաստատած, թրքախօս զանգուածներու մօտ, հայ երաժշտութեան, հայկական ժողովրդական երգերու տարածման փրկարար աշխատանքին մէջ: Հաննէսեանի ազգաշէն ճիգերը կը պահուին յաջողութեամբ: Շիրակ երգարանները, պարզ թէ ձայնագրեալը, կը կատարեն եզակի եւ ճակատագրական դեր: Հայ ժողովրդական երգերու խմբագրութիւնը, հրատարակութիւնը, տարածումը սփիւռքի մէջ, կը պարտինք Հաննէսեան եղբայրներու «Շիրակ երգարաններուն գագ»: Նորանոր երգիչներ քաջալերուեցան եւ դարձան հռչակաւոր՝ շնորհիւ «Շիրակ երգարաններու» եւ անոնցմով հայ երգին, հայ տոհմիկ թէ աշուղական երաժշտութեան ժողովրդականացման գագ: Այսօր հաճոյքով կը հաստատենք որ «Շիրակ երգարանները» մուտք գործած են ամէն հայախօս, հայաբաբախ օճախներէն ներս, քիչ մը ամէն տեղ...:

Շիրակ հրատարակչատունէն լոյս տեսած են մեր գրականութեան դասական եւ ժամանակակից բազմաթիւ հեղինակներ, ինչպիսիք՝ Գրիգոր Զոհրապ, Անդրանիկ Մառութեան, Յակոբ Պարոնեան, Յովհաննէս Շիրազ, Եղիշէ Չարենց, Լեւոն Վարդան, եւ այլն:

Ան քաջալերած է մեծ թիւով

սկսնակ գրողներ, որոնց կարգին ենք նաեւ մենք, երկու իր վաղեմի բժիշկ բարեկամները՝ Տոքթօր Յարութիւն Սաղրեան, որ իր անդրանիկ հեղինակութիւնը կատարած է Շիրակով, «Մինչեւ բժիշկին ժամանումը» խորագրեալ հատորով:

Հաստատութենէն հարիւրաւոր գիրքերու, գրական, գեղարուեստական, գիտական, բժշկագիտական, առողջապահական, մանկավարժական երկերու լոյս ընծայումը անցնող 60-տարիներու ընթացքին: Ինչպէս նաեւ բառարաններու հրատարակութիւնը ի՛ր իսկ աշխատանքով թեամբ եւ խմբագրութեամբ, երկու լեզուներով, Հայերէն-Անգլերէն, Անգլերէն-Հայերէն:



Իսկ ես՝ 50-ական թուականներուն, Միջին Արեւելքի մէջ խաւարի եւ տգիտութեան մէջ տուայտող նորահաս սերունդին ուղուած սեռային եւ մանկաբուժական-դաստիարակչական չորս հատորներու հրատարակութիւնը կը պարտիմ Յովհաննէս Հաննէսեան կրթական մշակին, «Շիրակ» հրատարակչատան նախաձեռնութեան գագ:

Հայ մշակոյթին սպասարկելու կիրքին, անպարագիծ տեսիլքին, նորարական ողջունելի՛ ոգի՛ին կը պարտինք անտարակոյս, Շիրակ

րակութիւնը ի՛ր իսկ աշխատանքով թեամբ եւ խմբագրութեամբ, երկու լեզուներով, Հայերէն-Անգլերէն, Անգլերէն-Հայերէն:

2. Յովհաննես Գանգեսեան Ազգային-Հասարակական Գործիչն ու Հրատարակագիրը:

Իր սիրած, թիթեղաշէն պատերով բայց աղամանդեա՛յ հայութեամբ բաբախուն վարժարանին, Պէյրուսի Սահակեան Բարձրագոյն

Շար.ը էջ 15

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2021 AEBU Scholarship Program
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 31, 2021

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Գիւտ Արքեպիսկոպոսի Յիշատակին Եւրոպայի Զնագոյն Եւ Նորագոյն Զայ Եկեղեցիները Զուլանտայի Սուրբ Զոգի Պելճիքայի Սուրբ Մարիամ Մագդաղենացի

«Վերջին շուրջ 25 տարիներուն Զուլանտայի հայերուն թիւը աճած էր մնայուն բնակչութեամբ, եւ Փարիզի Առաջնորդ Սերոբէ Արքեպիսկոպոս Մանուկեան 1982 թուին դիմումներ կատարած էր Ութնխաչի Կարտիճալ Ուլիլարամտոզին եւ քաղաքապետութեան վերստին գնելու հայոց Սուրբ Զոգի Եկեղեցին, սակայն ապարդիւն մնացած էր»

ԳԻՒՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՍԵՆԱՆ

ԴՈՎՏ. ԶԱԻՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ամսօրնաւոր Սուրբ Զոգի Եկեղեցին

Հուսահատի Գիւտ Արքեպիսկոպոս Նագագաշեանի վախճանման քառասունքին առիթով իր յիշատակին կ'ընծայեմ սոյն գրութիւնը որ պատմական տեղիք կը բովանդակէ Եւրոպայի հայ գաղութի պատմութեան համար ուր ան ծառայեց երկար տարիներ որպէս Հայրապետական Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի եւ Առաջնորդ Փարիզի: Իր ջանքերով Ամսօրնաւոր Եկեղեցին վերստին սեփականութիւնը եղաւ հայ համայնքին եւ նորագոյն եկեղեցին կանգնեցաւ Պրիւքսէլի մէջ:



սին եւ քաղաքապետութեան եկեղեցին ետ առնելու, սակայն առանց արդիւնք մը ստանալու»:

Եկեղեցին Վերստին Գնուած

Հոլանտացի կրօնաւորութիւններու միաբանութիւնը երբ եկեղեցին ծախու դրաւ, տուաւ նաեւ նախապատուութիւնը հայ համայնքին, ու վերջինս շնորհիւ Գիւտ Սրբազանի ամէն ճիգ ի գործ դնելով կրցաւ գնել գալն, «անմիջապէս գոյացնելով գինին մէկ երրորդը»: Գիւտ Արքեպիսկոպոս Սուրբ Զոգի Հայ Եկեղեցւոյ վերստացման լուրը հաղորդեց Մայր Աթոռ Ս.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, «որ գնահատելով իր հօտին նախանձախնդրութիւնը, նուիրեց գնման անհրաժեշտ գումարին յաւելեալ մէկ երրորդ բաժինը»: Իսկ վերջին մէկ երրորդն ալ նուիրուեցաւ ՀԲԸ Միութեան կողմէ: «Պատմական յուշարձան մը» նկատուած եկեղեցին, «լաւ եւ հաստատուն վիճակի մէջ է ըստած, ուր նախկին բոլոր արձանագրութիւնները կը մնան ըստ առաջնոյն»:

Եկեղեցւոյ հանդիսաւոր օծումը Գիւտ Արքեպիսկոպոս կատարած է 1989 Նոյեմբեր 26-ին երբ արդէն յաջողուելով 1984 Փետրուարին վախճանեալ Սերոբէ Արքեպիսկոպոսին, Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ նշանակուած էր Հայրապետական Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի: Այդ առիթով Ամենայն Հայոց Ս.Տ. Վազգէն Ա. Հայրապետ իր 1989 Նոյեմբեր 14 թուակիր «Օրհնութեան Գիրքը» ուղարկած էր «անհուն ուրախութեամբ ողջունելով վերաբացումն ու օծումը Ամսօրնաւոր հայոց պատմական եկեղեցիին՝ յանուն Սուրբ Զոգոյն»:

Ալմելոյի Զայ Զամայնքը

Հոլանտացի մայրաքաղաքէն 90 մղոն հեռավորութեամբ գտնուող Ալմելօ քաղաքը հայեր սկսան գաղթել Թուրքիայէն ու Հայաստանէն Սերոբէ Արքեպիսկոպոսի Հայրապետական Պատուիրակութեան շրջանին: Իր կարգադրութեամբ շուտով մնացուն հոգեւոր հովիւ մը նշանակուեցաւ: Երուսաղէմի երիտասարդ միաբաններէն Մանուէլ վարդապետ Երկաթեան 1980 թուականին Հոլանտա ժամանեց: Ալմելօ քաղաքին մէջ հայեր սկսած էին

հաստատուել 1976 թուականէն, եւ մինչեւ 1980 մօտ 300 հայ ընտանիքներ Թուրքիոյ ներքին գաւառներէն հեռանալով եկած ու բնակութիւն հաստատած էին: ՀԲԸ Միութեան կեդրոնական վարչութիւնը Հոլանտայի բարեսիրական եւ կրօնական կազմակերպութիւններու հետ գաղթական հայերուն բնակարան եւ գործ հայթայթեց, քաղաքին արժէքաւոր մէկ թաղին մէջ շէնք մըն ալ գնելով, ուր եկեղեցական արարողութիւններ ալ կատարուեցան:

Մինչ այդ 1985 թուին, երբ նախորդ տարին վախճանած էր Սերոբէ Արք Մանուկեան ու իրեն յաջորդած Գիւտ Արքեպիսկոպոս, Ալմելոյի հայ համայնքը ինքնաբաւ դառնալով իր հայկական սեփական եկեղեցին կառուցանեց երբ հայերու թիւը բազմապատուեցած էր քաղաքին մէջ համայնքի մնացուն հոգեւոր հովիւ Մանուէլ վարդապետ Երկաթեանի գլխաւորութեամբ: Մինչդեռ հոգեւոր հովիւի նշանակումէն առաջ յաճախ հայ եպիսկոպոսներ այցի երթալով Ալմելոյի համայնքը խանդավառ եւ

Մահակեանի եւ Գանատայն վազգէն Եպս. Քէշիշեանի: Ներկայ կ'ըլլար նաեւ ազգային բարերար Տիար Ալեք Մանուկեան: Հիմնարկէքին ներկայ էին նաեւ Պելճիքայի թագաւորական պալատի ներկայացուցիչները:

Եկեղեցւոյ Օծումը

Երբք տարի ետք, երբ արդէն նոր եկեղեցին կառուցուած էր, օծման համար Ամենայն Հայոց Ս.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս 1990 Մայիս 3-ին յատկապէս Պրիւքսէլ կը ժամանէր, իր հետ ունենալով Կիլիկիոյ Ս.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը: Վազգէն Հայրապետ Փարիզ հասնելով կը դիմաւորուէր Գիւտ Արքեպս. Նագագաշեանի, Նորվան Եպս. Զաքարեանի եւ հայ հոգեւորականութեան կողմէ: Նոյն օր Հայրապետը նորաշէն եկեղեցին կ'առաջնորդուէր, որ «դրսից նմանում է Ալթամարի Ս. Խաչ եկեղեցուն, իսկ ներսից ունի արդիական լուծում»:

Եկեղեցւոյ ճարտարապետն է Հայկ Մարտիկեան: Կիրակի Մայիս 6-ին տեղի կ'ունենար Ս. Մարիամ Մագդաղենացի Հայաստանեայց Եկեղեցւոյ



Ամսօրնաւոր Սուրբ Զոգի Եկեղեցին

գործօն կը պահէին, Ամսօրնաւոր Եկեղեցին կը մնար ուղղակի Փարիզի հովանաւորութեան տակ, ինչպէս նաեւ Պելճիքայի Սուրբ Մարիամ Մագդաղենացի եկեղեցին:

Պելճիքայի Զայ Եկեղեցին

Եւրոպայի նորագոյն հայ եկեղեցին եղաւ Պրիւքսէլի եկեղեցին: Պելճիքայի, յատկապէս Պրիւքսէլի մէջ ապրող հայութիւնը միշտ ենթակայ մնաց Փարիզի առաջնորդութեան, ուրկէ հոգեւորականներ կ'այցելէին պատահական առիթներով պատարագելու եւ կամ խորհուրդներ մատակարարելու: Հոն գործօն դիրքի վրայ կը մնային թէ՛ Գաղութային վարչութիւնը եւ թէ՛ Եկեղեցւոյ Շինութեան վարչութիւնը: Զոյգ վարչութիւնները եկեղեցւոյ շինութեան համար մայրաքաղաքի Քինդերմանս փողոցին վրայ յարմար կալուած մը գնելէ եւ նախապատրաստական աշխատանքներ կատարելէ ետք, իրենց տեղեկագիրը կը ներկայացնէին Փարիզի Առաջնորդ Գիւտ Արքեպիսկոպոս Նագագաշեանին, ստանալով իր հաւանութիւնն ու հովանաւորութիւնը: Գիւտ Սրբազան իսկոյն կը տեղեկացնէր Մայր Աթոռ Ս.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որուն արտօնութեամբ 1987 Նոյեմբեր 16-ին կը կատարէր եկեղեցւոյ հիմնարկէքը՝ մասնակցութեամբ Լիոնէն Դաւիթ Եպս.

օծումը՝ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ Գարեգին Բ. Կաթողիկոսին: Մինչ Հայրապետը կ'օժէր աւագ սեղանը, եպիսկոպոսներ կ'օժէին եկեղեցւոյ 16 սիւները: Պատարագը կը մատուցանէր Գիւտ Արքեպիսկոպոս: Վազգէն Հայրապետի քարոզէն առաջ կը կարդացուէր Հայրապետական Կոնդակը՝ ուղղուած Պելճիքայի Պոտուէն Ա. Թագաւորին, ուր յանուն հայ ժողովուրդին երախտագիտութիւն կը յայտնէր «որ Զեր պետական իշխանութեանց բարի կամեցողութեամբ հնարաւոր դարձաւ եւ որուն կանոնական օծումը մեր ձեռքով կատարելու գոհունակութիւնը ունեցանք»: Նոյն երեկոյեան պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին վազգէն Հայրապետ իր բարձր գնահատանքը կը յայտնէր ներկայ պետական անձանց եւ եկեղեցական ներկայացուցիչներուն: Պետական այցելութիւններ տալէ ետք Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայիս 9-ին Փարիզի վրայով կը վերադառնար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ի յիշատակ Գիւտ Արքեպիսկոպոս Նագագաշեանի այստեղ կ'արձանագրենք իր աննկուն կամքն ու յարատեւ աշխատանքը Եւրոպայի հնագոյն եւ նորագոյն հայ եկեղեցիներուն իսկական հովանաւորն ըլլալու պատիւը եւ մանաւանդ անոնց գործնական նուիրեալ հոգեւորական հանդիսանալը:

Իրան. Տնտեսութիւնը Նաեւ Դիմադրութեան Եւ Բանակցութեան Միջոց



ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Իրան տնտեսաքաղաքական յատուկ դիմագիծ ունեցող երկիր մըն է աշխարհի տարածքին: Ճիշդ է որ անոր աշխարհագրական դիրքն ու բնական հարստութիւնը, մասնաւորաբար նաեւ ու կազմը, կը նպաստեն այդ իւրաքանչիւր թեան, բայց նաեւ այդ հարստութիւնը շահարկելու կամ ընդհանրապէս տնտեսական տոկոսութիւն եւ ճկունութիւն ստեղծելու կամ քը եւ զայն երկրին արտաքին քաղաքականութեան ի սպաս դնելու վարքագիծը, իրանի տնտեսութիւնը կը դարձնեն եթէ ոչ օրինակելի (փտածութեան եւ դրամագլուխի կեդրոնացման պատճառով), առնուազն ուսանելի (տոկոսութեան առումով):

Նախ փորձենք արագ ակնարկով ներկայացնել Իրանի տնտեսական պատկերը, ապա տեսնել, թէ հակառակ տարիներու վրայ երկարող արեւմտեան եւ մասնաւորաբար ամերիկեան պատժամիջոցներուն, երկիրը ոչ միայն կը գոյատեւէ, այլեւ չ'ընկրկիր այդ ճնշումներուն դիմաց (թէեւ ցաւցնող), եւ այդ տոկոսութեան պատճառով՝ կընայ շուտով բարենպաստ համաձայնագիր մը ստորագրուիլ (վերանորոգ) Իրանի եւ արեւմուտքի միջեւ:

Ըստ Համաշխարհային դրամատան, Իրան ունի 82,91 միլիոն (2019) բնակիչ, իսկ համախառն տեղական արտադրութիւնը (GDP) կը գնահատուի 454 միլիարդ ամերիկեան տոլար (2018): Իրանի արտադրութեան մեծ մասը կը կազմեն նաեւ ու կազմը, եւ անոնք կը գոյացնեն կառավարութեան եկամուտին մեծ բաժինը:

Իրան ունի պետական կեդրոնացեալ եւ անհատական նախաձեռնութեան վրայ հիմնուած խառն տնտեսութիւն մը՝ աւելի թեքելով պետական ծրագրումին կողմը (60%): Թէեւ աւելի քան 40 տնտեսական մեծ նախաձեռնութիւններ արձանագրուած են Թեհրանի ելեմտական շուկային մէջ, նաեւ եւ կազմի բոլոր գործառնութիւնները կը կատարուին պետական նախաձեռնութեամբ եւ վերահսկողութեամբ: Տեղին է նշել, որ Իրան ունի աշխարհի նաեւ պահանջարկը 10%-ը եւ կազմի՝ 15%-ը, այլ խօսքով կը նկատուի ուժանիւթի գերպետութիւն մը: Մինչ տեղական շուկային մէջ ապրանքներու վաճառման գիները կը ճշդուին կառավարութեան կողմէ, եւ պետութիւնը ընդհանրապէս կ'օժա-

նադակէ սննդամթերքի եւ ուժանիւթի մարգերուն, անդին մաքսանենգութիւնը, վարչական կեդրոնաձիգ դրութիւնը եւ համատարած փտածութիւնը կը խափանեն անհատական նախաձեռնութեան զարգացումը: Կառավարական ծրագիրներուն մէջ կարեւոր տեղ կը գրաւեն գիտութեանց եւ արհեստագիտութեանց զարգացումը

1979-էն սկսեալ, Իրանի դէմ շարք մը տնտեսական պատժամիջոցներ հաստատուեցան մասնաւորաբար Միացեալ Նահանգներու եւ միջազգային այլ կառույցներու կողմէ: Առաջին պատժամիջոցները Միացեալ Նահանգները սահմանեց Նոյեմբեր 1979-ին, Թեհրանի ամերիկեան դեսպանատան գրաւման պատճառով: Անոնք ջնջուեցան 1981-ին: Պատժամիջոցները Միացեալ Նահանգներու կողմէ վերահաստատուեցան 1987-ին՝ այս անգամ Կաթիլի ճիւղի կիրարկելու ամբաստանութեամբ: Անոնք ընդլայնուեցան 1995-ին՝ ներառելով Իրանի կառավարութեան հետ գործակցող ընկերութիւններ: Պատժամիջոցներու երրորդ փուլը սկսաւ 2006-ին՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի 1737 բանաձեւին համաձայն, երբ Իրան մերժեց ուրանիւմի հարստացման իր ծրագիրը դադրեցնելու միջազգային պահանջները:

Փաստօրէն, 1979-էն ի վեր Միացեալ Նահանգներու ղեկավարած պատժամիջոցները կը միտէին ազդելու Իրանի արտաքին քաղաքականութեան եւ ուրանիւմի

հարստացման ծրագրին վրայ՝ այն մտավախութեամբ, որ Իրան վերջապէս կ'արեւմտեան պիտի յաջողի կորիզային զէնք ունենալ: Իրան կը հակադարձեց առարկելով, որ իր կորիզային ծրագիրը կը հետապնդէ քաղաքական նպատակներ, մասնաւորաբար ելեկտրականութեան արտադրութեան եւ բժշկագիտութեան մարգերուն մէջ:

Տնտեսական պատժամիջոցները չ'յաջողեցան փոխել Իրանի կորիզային քաղաքականութիւնը, թէեւ անոնց ճնշման տակ, Թեհրան ընդունեց բանակցութիւններ վարել արեւմուտքին հետ, առաջնորդութեամբ Միացեալ Նահանգներու: Պէտք է ընդունիլ, որ Իրանի տնտեսութիւնը որոշ չափով ցնցուած է այս երկարատեւ պատժամիջոցներէն, բայց ոչ միայն անոնցմէ, որովհետեւ տնտեսական ներքին որոշումներ, մասնաւորաբար նախկին նախագահ Ահմէտինաժատի օրով, նաեւ վնաս պատճառեցին տնտեսութեան, մինչեւ որ Իրանի հոգեւոր առաջնորդ Խամինէին եւ նախագահ Ռուհանին առաջնահերթ դարձուցին տնտեսական կայունութիւնն ու բարգաւաճումը՝ գանտք նկատելով համազօր ռեժիմի գոյատեւումին:

Տնտեսական տագնապը բնութագրելով իբրեւ ազգային անվտանգութեան հարց՝ Իրանեան ռեժիմը սկսաւ տնտեսական լուծումներ որոնել անվտանգութեան շրջագիծի մէջ, եւ այս առումով Խամինէի հրապարակեց իր «դիմադրող տնտեսութեան» վարդապետութիւնը իբրեւ պատասխան պատժամիջոցներուն՝ Իրանեան տնտեսական քաղաքականութեան մշակումը նաեւ զետեղելով ազգային անվտանգութեան պարունակի մէջ:

Դիմադրող տնտեսութեան վարդապետութիւնը կը միտի երկար ժամանակով Իրանի տնտեսութիւնը դարձնելու տոկոս եւ դիմացող արտաքին տնտեսական ճնշումներու, ներառեալ՝ արեւմտեան պատժամիջոցներուն եւ ելեմտական միջազգային յաճախակի տագնապներուն: Ներկայիս, Իրանի տնտեսական ծրագիրները կը հետապնդեն օտար ներդրումներու ներգրաւումը ուժանիւթի մարգին մէջ, ինչպէս նաեւ «գիտելիքներու տնտեսութեան» ստեղծումը տեղեկատուական արհեստագիտութեան զարգացման եւ անհատական նախաձեռնութիւններու քաջալերման շրջագիծին մէջ: Անհատական նախաձեռնութիւններու քաջալերանքը բնականաբար կ'ենթադրէ որոշ

մեղմացում պետական կեդրոնացեալ դրութեան: Տակաւին, Խամինէի ծրագիրը կը հետապնդէ տեղական ելեմտական շուկային բարեփոխումը, այնպէս՝ որ անկապահովէ դրամագլուխի ազատ հոսք եւ միաժամանակ դառնայ անկախ միջազգային ելեմտական համակարգէն, եւ հետեւաբար՝ ելեմտական միջազգային ցնցումներէն: Ներդրումներու համար, Իրան մեծապէս կ'ապաւինի Չինաստանի, իսկ առեւտուրի միջազգային արգելքները ճեղքելու համար՝ Ռուսիոյ: Իրան լաւապէս գիտէ միջազգային քաղաքականութեան հակառակութիւններէն օգտուելու գաղտնիքները:

Հիմա հարց կը ծագի, որ եթէ վիեննայի մէջ տեղի ունեցող բանակցութիւնները յաջողութեամբ պսակուին, Իրան պիտի շարունակէ՞ կիրարկել ու զարգացնել իր «դիմադրող տնտեսութիւնը»: Հոս, Ռուհանի եւ Խամինէի կը թուին տարակարծիք ըլլալ: Իրանի նախագահը կը նախընտրէ բացուիլ միջազգային տնտեսութեան, իսկ հոգեւոր առաջնորդը կ'սպասուի կը մօտենայ միջազգային ընտանիքին՝ մասնաւորաբար՝ արեւմուտքին՝ առարկելով, թէ ինքը վստահութիւն չունի մասնաւորաբար Միացեալ Նահանգներու հանդէպ, որ անշուշտ կը փոխադարձէ այդ անվտանգութիւնը:

Անշուշտ նախագահին մօտեցումը աւելի գործնապաշտ է, երբ նկատի առնենք համաշխարհայնացած տնտեսութեան համակարգը, որ օրէ օր աւելիով կը համարկուի, բայց տնտեսական միջազգային համակարգին վերամիանալու որեւէ քայլ կընայ տկարացնել Իրանի բանակցային դիրքը կորիզային խօսակցութիւններուն ընթացքին, կ'առարկեն Խամինէի հետեւորդները, որոնք պարսկական բանակցային ճարտարութեան յաջողութեան համար անհրաժեշտ կը նկատեն տնտեսական «անկախութիւնը»:

Այս նպատակով, անկախ բանակցութիւններէն, Իրան կը կառուցէ նաեւ նաեւ ինքնաբերական կազմի պահանջարկը ուղղակի քանակաբան զանց մը՝ նախ 50-60 օրուան ուժանիւթի ներքին ընդհանուր սպառման համար անհրաժեշտ քանակը ապահովելու, ապա իր պահանջարկը ազդելու շրջանային եւ միջազգային շուկաներուն վրայ՝ լաւագոյն պայմաններով եւ գինով ծախելու մտադրութեամբ:

#ArtsakhStrong
#GlobalArmeniansUnite
**WE ARE OUR BORDERS.
ALL FOR ARTSAKH.**
Donate Now

**TO DONATE VISIT
WWW.ARMENIAFUND.ORG/DONATE**

Պաղեստինեան «Գորնըսթոն» Պարբերաթերթի Համարը Նուիրուած Հայուրեան

Սապիլ, Արաբերէն լեզուով կը նշանակէ «ճամբայ», «ալիք» կամ «աղբիւր», միջ-եկեղեցական, տի-եզերական (ecumenical) կեդրոն մըն է Երուսաղէմի մէջ՝ որ կը միտի սատարել Ազատագրական Աստուածաբանութեան հասկացողութիւնը եւ կիրարկումը: Ան Պաղեստինի Քրիստոնեայ Համայնքի մէջ բնոյժ աշխուժ կազմակերպութիւն մըն է որ կը կեդրոնանայ ազատագրական շարժումի եւ անոր հասկացողութիւններու եւ կիրարկումներու վրայ: Սապիլը կը ձգտի Աւետարանը եւ անոր հասկացողութիւն-բացատրութիւնը դնել հաւաքականութեան մէջ եւ անոր տալ իմաստ՝ մեկնելով նոյն այդ հաւաքականութեան ընկերային-լեզուական եւ մշակութային հասկացողութիւններու մէջէն: Եւ թէ ինչպէս իւրաքանչիւր հաւաքականութիւն մեկնելով իր քաղաքական, մշակութային եւ պատմական ու ընկերատնտեսական վիճակներէն՝ պիտի ընկալէ-հասկնայ Աստուածաշունչի ճշմարտութիւնը եւ կիրարկէ գալն իր կեանքերուն մէջ: Սապիլ կազմակերպութիւնը կը ձգտի մշակել հոգեւոր հասկացողութիւնը՝ ըմբռնում մը՝ հասնելու համար արդարութեան, խղճարկութեան, ոչ բռնութեան եւ համակեցութեան իրականութիւններուն եւ տարբեր հաւաքականութիւններու մէջ: Ան նաեւ կը ձգտի միջազգային համակարգի մէջ ծանօթացնել եւ իրազեկ դարձնել Պաղեստինի Քրիստոնեայ Համայնքի ինքնութիւնը եւ հաւաքական կեանքի մէջ անոնց ներկայութիւնը ու իրենց վկայութիւնը: Անոր առաքելութիւնը կը կայանայ արմատաւորել Ազատագրութեան Աստուածաբանութիւնը Քրիստոնեական հաւատքի մէջէն՝ հոն ուր հաւաքականութեան կեանքերը կապրին բռնարարներու, բռնութեան, անարդարութեան եւ խտրականութեան պարագաներու եւ պայմաններու մէջ: Սապիլի հիմնադիրն է Պաղեստինի Անկլիքան համայնքի Սուրբ Գէորգ տաճարի նախկին կղերական՝ վեր:



Նախիմ Աթիքը:

«Գորնըսթոն» (Cornerstone) Սապիլի պարբերաթերթն է եւ որ ունի ծաւալուն տարածում: Այս ներկայ համարը նուիրուած է հայ ժողովուրդի պատմութեան եւ մարտահրաշխաններուն: Անոնք փորձած են վեր առնել նաեւ հայ ժողովուրդի հակադասական մշակութային ժառանգը՝ կեդրոնանալով Երուսաղէմի հայոց մատուցած մեծ ներդրումին եւ տարբեր մակարդակներու մէջէն: Արժարժուած է ցեղասպանութեան իրողականութիւնը եւ հայ ժողովուրդի եւ անոր պատմութեան մասին վկայութիւնները պահպանելու հայ եւ արաբ մտաւորականներու կողմէ: Համարին մէջ տեղ գտած է նաեւ Արաբական Մոցի Աստուածաշունչի ընկերութեան ընդհանուր քարտուղար՝ Դոկտ. Հրայր Ճէպէճեանի յօդուածը:

Շահեկան հրատարակութիւն մը նուիրուած հայ ժողովուրդի համար: Յատկանշական է որ այս հրատարակութիւնը կուզայ ժողովուրդ-հաւաքականութեան մը որ կապրի շատ մը գոյութեանական մարտահրաշխաններ՝ ի մասնաւորի ներկայ օրերուն: Եւ իր գոյութեան համար պայքար մղող ժողովուրդ մը կրնայ լաւագոյն հասկնալ *ուրիշ* մը տալու պար: Շնորհակալութիւն այս հրատարակութեանը համար:

Գրական-Երաժշտական Երեկոյ

Շարունակուած էջ 11-էն

կոյին միացած անուանի երգիչ Մարթեն Յորկանցին, որը Շ. Ազնաւուրի մեծագոյն երկրպագուն է եւ իր երգացանկում մշտապէս ներառուած են Շառլ Ազնաւուրի երգերը: Նա ողջունեց Սիւթըլի հայութեանը՝ նկատելով որ մեր ժողովուրդի համար այս դժուարին ժամանակներում, ողջունելի է, որ չենք կորցրել արուեստի նկատմամբ սէրը, որ շարունակուած ենք ապրել եւ ապրեցնել մեր ժողովուրդի տաղանդաշատ գաւակներին՝ վկայ մեծանուն հայի՝ Շարլ Ազնաւուրի յիշատակին նուիրուած այս երեկոն: Մարթեն Յորկանցը կատարեց Ազնաւուրի առաջին երգերից՝ «Il faut savoir» երգը, որն ընդունուեց

բուռն ծափահարութիւններով: Հանդիսութեան աւարտին հանդէս եկաւ Սուրբ Յարութիւն Եկեղեցու Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Վազգէն քահանայ Պոյաճեանը: Արժ. Տէր հայրը, նախ, շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներին, յայտագրին մաս կազմող աշակերտներին, մասնակիցներին եւ արուեստագէտներին, որոնց ջանքերի շնորհիւ կեանքի կոչուեց այս հանդիսութիւնը, եւ Սիւթըլում ապրող հայութիւնը կարողացաւ արժանին մատուցել աշխարհահռչակ հայորդուն՝ Շառլ Ազնաւուրին: Տէր հայրը ընդգծեց նաեւ, որ գիրը, գրականութիւնը, երաժշտութիւնն ու երգը միշտ եղել է, կայ եւ կը մնայ որպէս հայ ժողովուրդի ինքնութեան եւ նկարագրի երաշխիք:

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ
Սրտանց կը շնորհաւորենք սիրուած վարչապետ Նիկոլ Բաչինեանի փառաւոր յղթանակը ի փառս հայ ժողովուրդին: Կը շնորհաւորենք նաեւ Հայրենի ժողովուրդը: Այս ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հայկուհի Վահագն Փաթապետեան 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

Յովահննէս Հաննէսեանի Յիշատակին

Շարունակուած էջ 12-էն

վարժարանի մէջ, չորս տարիներ պաշտօնավարելէ ետք, ան, մաս կազմած է այդ լուսոյ տաճարին հոգաբարձական մարմնին: Ան եղած է նաեւ հիմնադիր անդամներէն մէկը, Յարութիւն կուժուելի եւ այլոց հետ Հայկական կրթական Բարեսիրական Միութեան, որը յաջողեցան Պէյրութի մէջ, թիթեղաշէն Սահակեան վարժարանը փոխարինել քարաշէն պատկառելի համալիրով մը:

Ան աշխատակցած է եւ մինչեւ հիմայ կ'աշխատակցի հայ մամուլին: Շատ չի՛ գրեր, բայց երբ գրէ՛ կամ կ'արտայայտուի յօդուածով մը կատարողական ձեռնարկի մը մասին, կը կարդացուի հետաքրքրութեամբ, անթերի եւ տպաւորիչ հայերէնով, խորթափանց վերլուծումներով: Չի՛ գրեր սակայն մէկու մը կամ ձեռնարկի մը մասին, եթէ դրական բան մը չունի ըսելիք: Որպէս ներհուն հրապարակագիր ան, Լոս Անճելըսի մէջ ստանձնեց մէկ տարիով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը կամաւորապէս: Այդ ժամանակաշրջանին իր խմբագրականները իրենց շօշափած ազգային պարունակով, յետագային նիւթերը դարձան իր հրատարակած «Գաղթը Վերգով ու Երգով» երկին, որ լոյս տեսաւ 1988-ին: 217-էջոց այս հատորը կ'արժէ որ կարդաք, որովհետեւ ան Ամերիկահայ մեր կեանքին պատկերալից, իրապաշտ պատմութիւնն է գրգռ ձեռով մը, նոր օրերու Շահան Շահնուրի հեղինակական «Նահանջը Առանց Երգի» պարունակով...: «Գաղթը Վերգով ու Երգով» գործը աւելի քան հարիւր դրուատալից գրախօսականներու արժանացած է սփիւռքի թէ՛ Հայաստանի ականաւոր գրիչներու կողմէ:

3. Հաննէսեան յարաշարժ մտաւորականը:

Ճշմարիտ մտաւորական որպէս «Շիրակ» հրատարակչատան համետ գրասենեակը 50-ական, 60-ական, 70-ական թուականներուն, Յովհաննէս Հաննէսեան դարձուցած էր Պէյրութի հայ մտաւորականներու, գործիչներու համագային ժամագրովալը: Հոն էին Դաշնակցականը, Հնչակեանը, Ռամկավարը, «չէզոք»-ը, Առաքելականն ու կաթողիկէն: «Շիրակ»-ի մէջ կը ծեծուէին օրուայ հրատապ հարցերը, կը քննուէին լոյս տեսած ստեղծագործութիւնները: Յով-

հաննէս թուամեանի, Աւետիս Իսահակեանի թիֆլիսի մէջ հաստատած եւ նշանաւոր դարձած՝ «Վերնատունը» կարծէք փոխադրուած ըլլար «Շիրակ» հրատարակչատունը:

Հետաքրքրական է հաստատել որ Յովհաննէս Հաննէսեան, իր շուրջ հայ մտաւորականներ հաւաքելու աւանդութիւնը փոխադրած է հոս, Լոս Անճելըս, ապա կ'ընտելի իր գրատունը, զայն վերածելով հաւաքովալի: Տարբեր քաղաքական ուղղութիւն ունեցող մտաւորականներ, ի մի կու գան ամէն շաբաթ եւ 2-3 ժամ համով-հոտով եւ գուարթախոհութեամբ կը ծեծեն ազգային հրատապ հարցեր:

Սիրելի Յովհաննէս, վարձքդ կատար... կեանքդ անտարակոյս դարձաւ հոգեկան, հայրենասիրական, ազգասիրական ապրումներու, ազնուական գազացումներու օրրան: Կէս դարէ աւելի ծառայեցիր հայ գիրին, հայ դպրութեան, հայ մշակոյթին: Բերիւր առիժի բաժինդ ազգապահպանման մեր պայքարին, հրատարակութիւններովդ, Շիրակ երգարաններովդ, գրիչովդ, խօսքովդ, թէ՛ յարատեւ ստեղծագործ եւ շինարար աշխատանքովդ: Սպասարկեցիր, զեղեցիկին, ազնիւին, բարիին, օգտակարին, համագային վեհ խտելներու հաւատարիմ, յարգուեցար ու կը շարունակես յարգուել: Իսկ վարձատրութիւնդ... վարձատրութիւնդ դո՛ւն պիտի գտնես մեր անմահ բանաստեղծին, Վահան թէ՛քէեանի հետեւեալ տողերուն մէջ:

«Ո՛ւզ մնաց, կեանքքդ ինձի ի՞նչ մնաց...

Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ այ՛ն միայնագգ

Ինչ որ տուի ուրիշին, վերադարձաւ անուշցած

Մնալու ինձ հետ յաւիտեան...»:

Քեզի արեւշատութիւն եւ առողջութիւն կը մաղթենք, որպէսզի շարունակես՝ ըմբռնել քաղցր պտուղները պատկառելի վաստակիդ՝ գուրգուրանքը սիրատոջոր, անձնուէր կնոջդ՝ Սօսիին,

-Օրինակելի, յարգալից սէրը գաւակներուդ՝ Շահէին ու Հրաչին,

- Քեզ մոլ հպարտ թոռնիկներուդ,

- Քեզ իսկապէս սիրող բարեկամներուդ,

- Երախտիքը՝ Ազգիդ, Եկեղեցւոյդ թէ՛ Հայրենիքիդ:

Մայիս 22, 2008

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ
ՀՌԻՓՍԻՄԷ ԱԲԳԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի հարազատներուն, ընտանեկան պարագաներուն եւ մասնաւորապէս Տէր եւ Տիկ. Վրէժ եւ Արմիկ թօմպուլեաններուն:
«Մասիս»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՄ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Եւրո-2020. Արդիւնքները



Կը շարունակուին Եւրոպայի Ֆուտբոլի առաջնութեան եզրափակիչ մրցաշարին խմբային փուլը մրցումները:

Վերջին օրերուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ֆինլանտա-Ռուսաստան 0:1
- Թուրքիա-Կալէս 0:2
- Իտալիա-Չեխիա 3:0
- Ռւքրանիա-Մակեթոնիա 2:0
- Տանիմարք-Պելճիքա 1:2
- Հոլանտա-Աւստրիա 2:0
- Շուէտ-Սլովաքիա 1:0
- Խրուաթիա-Չեխիա 1:1
- Անգլիա-Սկոտլանդ 0:0
- Հունգարիա-Ֆրանսա 1:1
- Փորթուկալ-Գերմանիա 2:4
- Սպանիա-Լեհաստան 1:1
- Իտալիա-Կալէս 1:0
- Չեխիա-Թուրքիա 3:1
- Ռւքրանիա-Աւստրիա 0:1
- Մաքետոնիա-Հոլանտա 0:3
- Ռուսաստան-Տանիմարք 1:4
- Ֆինլանտա-Պելճիքա 0:2
- Խրուաթիա-Սկոտլանդ 3:1
- Չեխիա-Անգլիա 0:1



Ա. խմբակէն ներս Իտալիա գլխաւորեց աղիւսակը, իր երեք մրցումները աւարտելով յաղթանակներով ու այդպիսով ապահովեց իր տեղը 1/8-րդ եզրափակիչէն ներս: Այս խմբակէն ներս Թուրքիա առանց որեւէ յաղթանակի վերադարձաւ տուն: Ան իր վերջին մրցումին Պաքուի մէջ 3:1 արդիւնքով պարտութիւն կրեց Չեխիայի դէմ:

Բ. խմբակէն ներս Պելճիքա իր երրորդ յաղթանակը արձանագրելով հասաւ 1/8-րդ եզրափակիչ:

Գ. խմբակը գլխաւորեց Հոլանտայի հաւաքականը, որ իր բոլոր երեք մրցումներու ընթացքին մնաց անպարտելի ու հասաւ 1/8-րդ եզրափակիչ:

Դ. խմբակէն ներս Անգլիա երեք խաղէ ետք ձեռք ձգեց 7 կէտ ու մուտք գործեց 1/8-րդ եզրափակիչ:

Ե. խմբակէն ներս կացութիւնը կը մնայ անորոշ: Մէկ հանդիպում մնացած ունի 4 կէտ, Սլովաքիա 3 կէտ, Սպանիա 2 կէտ:

Զ. խմբակէն ներս ամենէն մեծ անորոշութիւնը կը տիրէ այս խմբակէն ներս: Դասաւորումը կը յստականայ, երրորդ եւ վերջին խաղերէն ետք: Ֆրանսա այժմ ունի 4 կէտ, Գերմանիա 3 կէտ, նոյնպէս 3 կէտ ունի Փորթուկալ:



Հայ Բռնցքամարտիկները Առաջին Սետալները Ապահոված ԵՆ Եւրոպայի Առաջնութեան Ընթացքին



Հայաստանը առաջին մետալը ապահովեց Իտալիոյ մէջ ընթացող մինչեւ 22 տարեկաններու բռնցքամարտի Եւրոպայի առաջնութեան ընթացքին:

«Արմենիբրես»-ի հաղորդումով՝ Հայաստանի համար առաջին մետալը ապահովեց 56 կգ քաշային Արթուր Բագէյեանը, որ 1/4 եզրափակիչին հակադէմ առաւելութեամբ զեղեցիկ յաղթանակ տօնեց Պոնիա եւ Հերցոգովինան ներկայացնող Ալեն Ռահիմիչի նկատմամբ ու դուրս եկաւ կիսաեզրափակիչ: Բագէյեանը ապահովեց առնուազն պրոնզէ մեդալ:

81 կգ քաշային Համբարձում Յակոբեանը, քառորդ եզրափակիչին 4:1 հաշուով առաւելութեան հասնելով Գերմանիան ներկայացնող Բեննոսա Էնիշի նկատմամբ, ապահովեց առնուազն պրոնզէ մետալ:

Տիգրան Պետրոսեանի Անուան Մրցաշարը Սամուէլ Սեւեան՝ Ախոյեան

Երեւանի մէջ աւարտեցան Աշխարհի նախկին ախոյեան Տիգրան Պետրոսեանի անուան յուշամրցաշարի մրցումները: Ինը հանգրուան ետք, 8 կէտով առաջին դիրքը զբաւեց հայ-ազգի ԱՄՆ-ի վարպետ Սամուէլ Սեւեանը:



Գէորգ Ալավետեան զբաւեց երկրորդ դիրքը 7,5 կէտով, իսկ երրորդ դիրքը զբաւեց Աշոտ Նաթանեանը 7 կէտով:

Մոուրիցոն Կը Ցանկայ «Ռոմայի» Մէջ Տեսնել Ռամոսին



Իտալական «Ռոմայի» փորթուկալացի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրիլիոն կը ցանկայ իր ղեկավարած խումբին մէջ տեսնել Մատրիտի «Ռեալէն» հեռացած սպանացի պաշտպան Սերխիո Ռամոսին, կը հաղորդէ Sport Mediaset-ը:

Հոռոմէական ակումբը 35-ամեայ ֆուտպոլիստին առաջարկած է երկու տարուայ պայմանագիր՝ տարեկան 7,5 միլիոն եւրօ աշխատավարձով: Ռամոսը դեռ չէ որոշած:

Սպանական մամուլը գրած էր, որ Ռամոսի հետ պայմանագիր կնքելու ցանկութիւն ունին անգլիական «Մանչեսթեր Սիթի» ու «Մանչեսթեր Յունայթըտը» եւ ֆրանսական ՊՍԺ-ն: